

**ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՀԱՅ ՄԱՍ ՈՒԼԸ,
ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆՉԵՒ 1950**

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

ՆԵՐԱԾ ՈՒԹԻՒՆ

Հարաւային Ամերիկայի հայ մամուլի ուսումնասիրութիւնը հետազոտողներու տեսադաշտէն դուրս մնացած է: Խորհրդահայ շրջանին լոյս տեսած չորս համահաւաք ցուցակներէն (Գարեգին Լեւոնեան՝ 1934, Յովհաննէս Պետրոսեան՝ 1954-57, Ամալիա Կիրակոսեան՝ 1970, եւ Մանուէլ Բարլոյեան՝ 1986) եւ հոս ու հոն տարբեր հեղինակներու թուուցիկ ակնարկութիւններէն կամ մասնակի ցանկերէն անդին, հայերէն լեզուով գրեթէ ոչինչ գրուած է ամերիկեան ցամաքամասի այդ շրջանի մամուլին մասին:

Պատկերը քիչ մը աւելի մխիթարական է այս մասին սպաներէն լեզուով եղած հրատարակութիւններուն, շնորհիւ կարապետ Հասասեանի, որուն կը պարտինք ցուցակագրումի եւ համառօտ վերլուծումի երկու փորձեր, լոյս տեսած՝ 1974ին եւ 1989ին¹: Սակայն, լեզուական խոչընդոտը հիմնական պատճառը եղած է, որ իր գործը մասնագիտական շրջանառութեան մէջ մտած չըլլայ:

Մեր աշխատանքը ուղղուած է նկարագրելու ի. դարու առաջին կէսի Հարաւային Ամերիկայի հայ մամուլը, քանի որ ժամանակաշրջանը վճռական եղած է գլխաւոր անուններու ձեւաւորումին մէջ: Ներկայացուած են մինչեւ 1950 ծնունդ առած մամուլի բոլոր անունները, իսկ աւելի ուշ շարունակուած կամ շարունակւող թերթերու պարագային՝ այսօրուան պատկերը եւս: Բովանդակային վերլուծումի չենք ձեռնարկած, քանի որ քննարկուող թերթերէն ոմանք մատչելի չեն մեզի, իսկ ուրիշներ մասնակի ընթերցումի առարկայ եղած են: Սոյն մատենագիտական ատաղձին հիմամբ կարելի է ձեռնարկել վերլուծական աշխատանքի: Կատարելութեան որեւէ յաւակնութիւն չունինք, տրուած ըլլալով նշուած անպատեհութիւնները, ինչպէս եւ մամուլի լաւ պահեստներու սակաւութիւնը, շատ մը թերթերու վաղանցուկ եւ կարճատեւ բնութիւնը, օժանդակ տուեալներու ժխտութիւնը, եւլն.: Ահա թէ ինչու պիտի նկատուի նաեւ, երբեմն, ոչ-լրիւ ներկայացում մը: Ըստ կարելուոյն, ջանացած ենք ճշգրտել եւ քննական հայեացքով անդրա-

դառնալ սկզբնաղբիւրներու եւ երկրորդական աղբիւրներու հայ-
թայթած տեղեկութիւններուն:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

1910ականներուն, արժանթինահայ գաղութի կազմաւորումի
սկզբնաւորութեան զուգահեռ, մամուլ ստեղծելու առաջին փորձե-
րը եղած են:

1923ի նամակի մը մէջ, Արմենակ Քէօշկերեան յիշած է, թէ
1915ին, ՀԲԸՄի վարչական նիստին, առաջարկած է «հէքթոկրա-
ֆով ամսաթերթ» մը լոյս ընծայել²: Արդարեւ, 18 ֆետրուար
1915ի նիստին ան «նոյնպէս ամսաթերթի մը հրատարակութեան
համար առաջարկած էր սակայն բաւական դժուարութիւններ ու-
նենալուն մէկ ամսուան համար լետաձգուեցաւ»³: Յետագայ արձա-
նագրութիւնները ոչինչ կ'աւելցնեն այս մասին:

1916ին, Հ. Յ. Դ. անդամ Ասատուր Զնտանճեան ծրագրած է
թերթ մը հրատարակել, առ այդ բանակցելով սուրիահայ ձեմիլ
Տիգրանեանի հետ... արաբական թերթի մը խմբագիր..., առանց
դրական արդիւնքի լանգելու:

Քորտոպալի մէջ, իբրեւ թէ 1915ին «Արծիւ» անունով դաշ-
նակցական կարճատեւ պարբերական մը լոյս տեսած է⁴, բայց այս
տեղեկութիւնը թիւրիմացութիւն մըն է, քանի որ այդ տարի
հիմնուած է «Արծիւ» անունը կրող կուսակցական խումբ մը մի-
այն:

Սակայն, Հարաւային Ամերիկայի մամուլի առաջին անդամը
լոյս տեսած է ո՛չ թէ Պուենոս Այրէս, այլ՝ Մենտոսա քաղաքին
մէջ⁵, եւ ոչ թէ հայերէն, այլ՝ սպաներէն լեզուով: Հրատարակու-
թիւնը իրագործած է իրանահայ բժիշկ Սարգիս Պետրոսի Սար-
գսեան (Խոյ, 1887 - Մենտոսա, 14 Ապրիլ 1953): Այս մասին ցարդ
յայտնի եզակի տեղեկութիւնը կը պարտինք իրանահայ մտաւորա-
կան Ղուկաս Կարապետեանի մահախօսականին: Սարգսեան հաս-
տատուած է Չիլէի սահմանակից արժանթինեան այս քաղաքը
1910-1914 թուականներուն:

«... Ծանօթ լինելով տեղի լեզուին, գնում է տպագրական մի
մեքենայ եւ հրատարակում է սպաներէն լեզուով "Արմենիա"
անունով պարբերական մի ժուռնալ, մինչեւ վերջ էլ պահե-
լով այդ անունը իր գործատեղի վրայ:

20ական թուականին, իր առաջին պարբերականը ստացայ
Թաւրիզում, դժբախտաբար ոչ ոք չէր կարողանում կարդալ,
բարեբախտաբար նոյն թուին թեմական կենտր[ոնական]
դպրոցում դասաւանդում էր պրոֆ. Աճառեանը. դասամիջո-

ցին ինդրեցի իրենից այդ ժուռնալը տեսնել: Մեծ յափշտակութեամբ վերցրեց եւ ամբիոնի վրայ նստած սկսեց անհամբեր կարդալ: Իմ հարցումին, թէ Պ. Աճառեան, ի՞նչ է գըրուած այդ ժուռնալի մէջ, պատասխան չստացայ: Լուռ եւ մտազբաղ կարդում էր ամենայն արագութեամբ: Ընթերցումը վերջացնելուց յետոյ պատասխանեց թէ գրուած է սպաներէն լեզուով հայկական կոտորածների մասին. թող մնայ ինձ մօտ, ես պէտք ունիմ (sic) դրան եւ այդպէս էլ եղաւ, մնաց իր մօտ»:

Պարբերականին ճակատագիրը անյայտ է: Ըստ Հասասեանի, հրատարակիչը Սարգիս Պետրոս (Եղիազար) Տէր Սարգիսեան կը կոչուէր, իսկ պարբերականը 20-30 էջ էր, սակայն ոչ Աճառեանի արխիւալին ֆոնտին եւ ոչ ալ Մենտոսալի գրադարաններու մէջ գտնուած է թերթէն: Հասասեան, յետագային, ակնյցուցած է, որ հրատարակութիւնը 1918ի շուրջ պէտք է եղած ըլլայ եւ որ Տէր Սարգիսեան լոյս ընծայած է հայկական ջարդերու նուիրուած երկու սպաներէն հատորներ⁸: Սակայն, իր պնդումը, թէ պարբերականին անունը յայտնի չէ (թէեւ սկզբնապէս ընդունած էր *Արմենիա* անունը) կը հակասէ իր աղբիւրին. Ղ. Կարապետեան յտակօրէն կ'ըսէ, թէ «ժուռնալ»ին անունը *Արմենիա* էր:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԵՐ (1922-1925)

ԽՈՐՀՐԴԱԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐԺԵՆԹԻՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Սպաներէն լեզուով առաջին հրատարակութիւնը պայմանաւորուած էր 1910-20ականներու վիճակով, եւ անհատական նախաձեռնութիւն էր, հեռու՝ գաղութային կեդրոններէ: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին, արժանթինահայ մամուլի բոլոր հրատարակութիւնները պիտի արձանագրուէին բացառաբար Պուենոս Այրէսի մէջ:

Սովորաբար կը համարուի, որ գաղութի հայերէն առաջին թերթը եղած է *Արժենթինեան Մամուլ* շաբաթաթերթը¹⁰, ինչ որ վերաքննութեան կը կարօտի:

Արդարեւ, *Արժենթինեան Մամուլի* առաջին թիւը կը կրէ «Բ. տարի, թիւ 1» եւ «չարունակ. Խորհրդային Հայաստանի» վերտառութիւնը, ինպէս եւ՝ «արժենթինահայ առաջին թերթ» ըլլալու լիշատակումը (վերջինս՝ բոլոր թիւերուն մէջ)¹¹: Իսկ 11րդ թիւին մէջ, կը լիշուի թէ *Խորհրդային Հայաստանի* հրատարակութեան մէջ դէր ունեցած են Մ. Եզեկիէյեան, Մ. Պալանեան եւ ուրիշներ¹²: Այլ տեղեկութիւններ չեն տրուած:

Յարդ բոլոր ուսումնասիրողներու ուշադրութենէն վրիպած այս պարագան, մեր կարծիքով, կռուան մըն է թերթը նոյնացնելու *Նորհրդային Հայաստան* խմորատիպ ամսագրին հետ, («օրկան *Նորհրդային Հայաստանի Տեխնիկական Օգնութեան Ընկերութեան*»), որ լոյս ընծալուած է Պուենոս Այրէսի մէջ, 1923ին, խմբագրութեամբ՝ Արրահամ Գրաճեանի, 8 էջով¹³: Չենք կրցած ստուգել տարեթիւին ճշգրտութիւնը. Միհրան Սեֆերեան տուած է 1922, իսկ Արտաշէս Տէր Խաչատուրեան՝ 1922-1923¹⁴:

Այսպիսով, *Նորհրդային Հայաստան* եղած է առաջին հայերէն թերթը, իսկ *Արժենթինեան Մամուլ*՝ առաջին տպագիր հայերէն թերթը¹⁵:

Թէ՛ *Նորհրդային Հայաստան* եւ թէ՛ *Արժենթինեան Մամուլ* ունեցած են հնչակեան ուղղութիւն: Թերթին ո՛չ անունի եւ ո՛չ ալ խմբագրի փոփոխութեան պատճառները յայտնի են: *Արժենթինեան Մամուլի* թուականներու մասին շփոթ կայ: Լեւոնեան կը գրէ 1922¹⁶, Պետրոսեան՝ 1924¹⁷, իսկ Կիրակոսեան եւ Բարլոյեան՝ 1922-1924¹⁸, ըստ երեւոյթին՝ համադրելով նախորդ երկուքը: Սեֆերեան կու տայ 1923 թուականը¹⁹:

1974ին, Հասասեան ալ տուած էր 1923 թուականը²⁰: Սակայն, 1989ին, *Արժենթինեան Մամուլի* առաջին համարը ան թուագրած է 16 Դեկտեմբեր 1923, եւ տեւողութիւնը՝ մինչեւ 1924ի սկիզբները²¹: Իր նորագոյն թուագրումն է Հոկտեմբեր 1923-Ապրիլ 1924²²:

Արժենթինեան Մամուլ շաբաթաթերթի 2 էջնոց առաջին համարը լոյս տեսած է 7 Հոկտեմբեր 1923ին, իսկ վերջինը՝ 6 Ապրիլ 1924ին²³: Անուանաթերթը միշտ *Արժենթինեան Մամուլ* կը գրէ եւ ոչ *Արժանթինեան Մամուլ*:

Թերթի հիմնադրութեան մասին շահեկան տեղեկութիւններ տուած է անոր մասնակից ու առաջին խմբագիր Ստեփան Շիւրր-տմեանը. «Անհրաժեշտ էր տպագիր թերթ մը ունենալ. հոգ չէ՛ թէ փոքր, համեստ: Բայց՝ ինչպէ՞ս... ամէն ինչ կը պակսէր [sic]: Հայերէն գիր, կազմուածք, գրաշար ու նոյնիսկ... քիչ թէ շատ կարողութիւն ունեցող խմբագիր մը:

Գնեցինք ՀԲԼՄի տեղական մասնաճիւղին մօտ գոյութիւն ունեցող մի քանի քիւթ անգործածելի գիրերը: Ապա, հայերէնի «նմանող» լատիններէն տառեր ալ խառնելով՝ ունեցանք թերթը հրատարակելու չափ գիր...»²⁴:

Երկիջեան շաբաթաթերթը լոյս տեսած է *Լա Ինթերնասիոնալի* տպարանէն (*Արժանթինի Համայնավար Կուսակցութեան պաշտօնաթերթը*): Գրաշարանոցը հաստատուած էր Cochabamba 2148 փողոցը, որ հնչակեան ակումբի հասցէն էր²⁵:

Առաջին թիւերը կը բացայայտեն գաղափարական լայնախոհութիւն թերթին կողմէ. առաջին թիւին աշխատակցած է Հ. Յ. Դ. անդամ Արամ Տումանեան (այնուհետեւ ծանօթ՝ Հարգան ծածկանունով), որ խմբագրին հայրենակիցն էր²⁶: Ըստ Շխրրտմեանի, առաջին խմբագրականը գրած է պատմաբան Յարութիւն Աստուրեանը (նախկին Մխիթարեան՝ Վենետիկէն), որ տարի մը առաջ ժամանած էր Արժանթին²⁷:

Սակայն, Սեպտեմբեր 1923ին Հնչակեան Կուսակցութիւնը շրջաբերական մը լղած էր իր մասնաճիւղերուն՝ Կոմիտերն մտնելու կապակցութեամբ, ինչ որ իր կարգին ներքին հարցեր պիտի բերէր: Արդարեւ, սկիզբը կազմակերպական պատկանելութիւն չբացայայտելէ ետք, թերթին 13րդ թիւով (30 Դեկտեմբեր 1923) յայտարարուած է «օրգան Ամերիկայի Բանուորական Կուսակցութեան Հայ Ֆեդերացիայի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան»²⁸: Ասիկա հետեւանք էր ներքին շարժումի մը, ինչպէս կը վկայէ խորհրդահայ ղեկավար Պօղոս Մակինցեանի հետեւեալ մէջբերումը.-

«Հեռաւոր Արժանթինայից մեզ գրում են՝

«խորհրդային Հայաստանի Երրորդ տարելիցի նախօրեակին կարողացանք երեք կոմունիստ ընկերներով մեր տրամադրութեան տակ առնել «Արժանթինեան Մամուլը»: Առաջին թիւը, որ է Դեկտեմբերի 2ը, իմ խմբագրութեամբ լոյս տեսաւ: Ասկէ առաջ թուակիրներուն ոչ մէկ պատասխանատուութիւն ունեցած եմ: Շուտով կը հասնի ընկեր Մոչէն, որպէս խմբագիր «Արժանթինեան» Մամուլի»: Այստեղէն 500 դոլլար ուղարկեցին Նիւ Եորք ընկ. Մնարեանին Հայաստանի համար»²⁹:

Մակինցեան չի լիչեր նամակագրին անունը. վստահաբար խօսքը կը վերաբերի Զարմայր Քիւթնեանին (Զ. Կոմուն), զոր Շխրրտմեան լիչած է իբրեւ խմբագրական կազմի անդամ³⁰: 2 Դեկտեմբեր 1923ին անուանաթերթը տպուած է կարմիր գոյնով եւ առաջին էջին՝ ժապաւէնի ձեւով՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացէ՛ք» նշանախօսքը, ի փառս Հայաստանի խորհրդայնացումի երրորդ տարեդարձին: Տեղի ունեցած է հասցէի փոփոխութիւն՝ San Juan 2381³¹:

Այս վիճակը տեւած է մինչեւ Մարտ 1924, երբ շաբաթաթերթի 25րդ թիւը լոյս տեսած է իբրեւ՝ «օրգան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Պուէնոս Այրէսի մասնաճիւղի» եւ ազդարարուած, թէ Քիւթնեան այլեւս կապ չունի թերթին հետ³²: Շխրրտմեան առժամաբար վերստանձնած է թերթին խմբագրութիւնը:

Յաջորդ ու վերջին թիւը՝ 6 Ապրիլին, յայտարարած է նոր խմբագրի՝ Մ. Օշինի (Միհրան Ուզունեան) ժամանումը Փարիզէն³³։ Ըստ Շխըրտմեանի, «թերթը հազիւ բոլորած էր իր գոյութեան առաջին տարին՝ [երբ] հանդիպեցաւ տնտեսական դժուարութիւններու»³⁴։ «Առաջին տարին» պէտք է ընդունիլ պայմանականօրէն, քանի որ շաբաթաթերթը այդ անունով լոյս տեսած է ընդամէնը վեց ամիս։

ՆՈՐ ԵՐԿԻՐ

Սակայն, տագնապը շուտով լուծուած է։ Արդարեւ, *Արժենթինեան Մամուլին* յաջորդած է *Նոր Երկիր* շաբաթաթերթը, որուն չորրորդ թիւը կը կրէ 8 Մայիս 1924 թուականը³⁵։ Հետեւաբար, առաջին թիւը պէտք է լոյս տեսած ըլլայ 17 Ապրիլ 1924ին, մեր հաշուարկով։ Շխըրտմեան գրած է այս մասին. «Խմբագիր Մ. Օշին [թերթին] անունը փոխեց եւ գալն վերամկրտեց “Նոր Երկիր” անունամբ։ “Նոր Երկիր”ն ալ իր նախորդին ճակատագրին արժանանալով ունեցաւ մէկ տարուան կեանք միայն։ Բանուոր ընկերներու վտիտ քսակներով կարելի չեղաւ ապրեցնել այս բազմաձախ հրատարակութիւնը»³⁶։

Նոր Երկիրը, ըստ նկարագրութեան, պահած է նախորդին ծաւալն ու չափերը։ Սակայն, թուագրումին մասին նկատուելի շփոթ մը կայ։ Մինչ Լեւոնեան կը գրէ «1922(?)» 1924ից (նոր շրջան)³⁷, Պետրոսեան, Կիրակոսեան ու Բաբլոյեան կը թուագրեն 1922-1925³⁸, հարցման նշանը անհիմն կերպով ստոյգ իրողութեան վերածելով։ Թերթը շարունակութիւնն էր *Արժենթինեան Մամուլին* եւ զուգահեռ հրատարակութիւնն չէր, թէկուզեւ «ժողովրդական շաբաթաթերթ» վերտառութեամբ։

Ըստ Պետրոսեանի, Կիրակոսեանի եւ Բաբլոյեանի, խմբագիրը եղած է Մ. Օշինը, որուն յաջորդած է Քիւթնեանը, ինչ որ գաղափարական կողմնորոշումի նոր դարձ մը կը թուի ցոյց տալ³⁹։ Արդարեւ, Մայիս 1ին «... խումբ մը դասակարգային գիտակցութեան հասած հնչ[ակեան] ընկերներ դուրս եկան Հնչ[ակեան] կուսակցութենէն»⁴⁰, ու այսպէս ստեղծուած է առաջին համայնավար խմբակցութիւնը արժանթինահայ գաղութին մէջ։

Հասասեան *Նոր Երկիրի* հրատարակութեան թուականը կը համարէ 1924⁴¹։ Սեֆերեան կու տայ 1924-1925 տարեթիւը⁴²։ Հիմնուելով Շխըրտմեանի վկայութեան վրայ, մենք ալ հակած ենք Սեֆերեանի կարծիքին միանալու։

ԲՈՂՈՔԻ ՉԱՅՆ

Ս. Դ. Հ. Կ.ի լրագրական փորձը եւ գաղափարական պայքարը պատճառ դարձած են որ Հ. Յ. Դաշնակցութիւնը գործի լծուի սեփական մամուլ ստեղծելու: 1923էն, ներգաղթի հոսանքը սկսած է հզօրացնել կուսակցութեան տեղական մարմինը: «Այդ միջոցին, կը գրէ Ս. Ֆիրունց (Մըբատ Թորգոմեան - Վ. Մ.),- տարեց եւ երիտասարդ ընկերներու միակ մտահոգութիւնը կ'ըլլայ հայերէն թերթ մը հրատարակել, որու համար ամէն հնարաւոր միջոցներ կը գործադրուին, օր առաջ զայն իրականութիւն տեսնելու համար: Այս ուղղութեամբ բանակցութիւններ կը վարուին պատկան մարմիններու եւ տպագրական հաստատութիւններու հետ»⁴³: Սոկրատ Թերզեան կ'աւելցնէ, թէ «1924 թ. սկիզբները տեղույս կոմիտէն ձանձրացած [Յարութիւն] Թահթաճեանի թելադրանքներէն ու առաջարկներէն, վերջապէս որոշեց Եւրոպայէն մօտաւորապէս երեք հարիւր քիլօ տառեր բերել տալ: Ապսպրեցինք տառերը եւ սկսանք գործի»⁴⁴:

Գիրերը գնուած էին վենետիկի Մխիթարեաններէն⁴⁵:

Ըստ Հասասեանի, Օգոստոս 1924ին երեսուն հոգի գրաւոր կերպով ուխտած են օրաթերթի մը հրատարակութիւնը իրականացնել⁴⁶: Այս դէպքին կրնայ վերաբերիլ Թերզեանի հաւաստումը՝ ժողովի մը մասին, որ 1924ի շուրջ տեղի ունեցած է Թահթաճեանի խանութին վերի չարկը, ուր որոշուած է թերթ հրատարակել: Տասնեակ մը մասնակիցներ յականէ յանուանէ կը լիշուին⁴⁷:

Բանակցութիւնները տեղի ունեցած են շրջանի վերին մարմնին՝ Հիւսիսային Ամերիկայի Կեդրոնական կոմիտէին հետ, «ուրկէ ընկ. [Մինաս] Վերածին կը խոստանայ շրջանը այցելել եւ միասնաբար արդարացնել (sic) թերթի հրատարակութիւնը»⁴⁸: Մինչեւ տպագիր թերթի հրատարակումը, կուսակցութիւնը խմորատիպ օրկան ունեցած է: «1923ին անհրաժեշտութիւն տեսնուեցաւ հրատարակելու «Բողոքի ձայն» խմորատիպ թերթը», կը գրէ Թորգոմեան⁴⁹: Երեւութապէս հաւանական, թուագրումը հերքուած է Միհրան Մինասեանի փաստարկով: Արդարեւ, Ալեքսանտրէթի Ջարթօնք չարաթաթերթի Պուենոս Այրէսի թղթակիցը 12 Օգոստոս 1924ին յայտնած է, թէ Հ. Յ. Դ.ն այդ օրերուն սկսած է լոյս ընծայել կիսամեայ խմորատիպ թերթ մը⁵⁰: Այս տուեալը կը սրբազրէ նաեւ 1925 թուագրումը⁵¹:

Խմբագրութիւնը կը գտնուէր քաղաքէն դուրս՝ Աւեժանետա արուարձանը, Pavon 116 փողոց⁵²: Բողոքի ձայնը եղած է երկչաբաթեայ, չորս էջով, եւ զայն խմբագրած են Արամ Տումանեան (Հարգան), Սոկրատ Թերզեան (Յ. Թորոս) եւ Օննիկ Տարագճեան

(Օննիկ): Առաջին խմբագրականը ստորագրուած է Ասօ (Արամ, Սոկրատ, Օննիկ)⁵³:

Բողոքի Չայնէն լոյս տեսած է 30 թիւ, 250-300 օրինակ, ըստ Թերզեանի, որ դժբախտաբար չէ թուագրած գայն, ու գոհացած է հետեւեալ դիտողութեամբ.-

«1925 թ. սկիզբները տառերը եկած էին, ստիպուեցանք հետեւեալ յայտարարութիւնը գրել թերթի ճակատը. «Նկատի ունենալով որ ապսպրուած տառերը եկած են, եւ մօտ օրէն պիտի հրատարակենք տպագրեալ թերթ, այսօրուընէ դադրած է «Բողոքի ձայն»ը»⁵⁴:

Ըստ Ֆիրունցի, թերթը լոյս տեսած է մինչեւ 3 փետրուար 1925⁵⁵: Եթէ ճիշդ է թուականը (ցարդ մեզի յայտնի միակ աղբիւրն է), Թերզեանի լիշած 30 թիւերը՝ չափազանցուած են, քանի որ կիսամսեան սկսած էր լոյս տեսնել Յուլիս 1924ի շուրջ:

Բողոքի Չայնի յայտարարութիւնը իրականացած չէ: Վերածինի այցելութիւնը տեղի ունեցած չէ եւ ծրագիրները՝ առկախ մնացած: Տպագիր թերթ լոյս ընծայելու կազմակերպական հարցերը անօգուտ դարձուցած են նոր եկած գիրերը, որոնք մէկ կողմ մնացած են մինչեւ 1931:

ԿԱՐՄԻՐ ԱՍՏՂ

Փակելով 1923-1925 շրջանի կուսակցական նախափորձերու քննարկումը, հարկ է անդրադառնալ նորայայտ թերթի մը, որ մասնագիտական գրականութենէն բացակայ է: Թերթը կը պատկանէր «յառաջդիմական» հոսանքին եւ սկսած է լոյս տեսնել 1924ին:

Աղբիւրը, առայժմ, Փարիզի Բանփոր-Պարիզ շաբաթաթերթն է, ուր լոյս տեսած են Պուենոս Այրէսէն ղրկուած թղթակցութիւններ: Անուշաւան Զիլեանի գրութիւնը, թուագրուած՝ 8 Հոկտեմբեր 1924, կը յայտնէ, թէ «Հատուածիս պաշտօնական օրկանն է «Կարմիր Աստղ», որը կը հրատարակուի ամիսը երկու անգամ»⁵⁶:

Քիւթնեբեանը, Յունուարին ժամանելով Փարիզ, Բանփոր-Պարիզի խմբագրութեան տեղեկութիւն տուած է Պուենոս Այրէսի համայնավարներու մասին: Այդ տուեալներուն հիմամբ գրուած յօդուածի մը մէջ յայտնուած է, թէ «մեր խումբը կը հրատարակէ «Կարմիր Աստղ» տասնըհինգօրեայ պաշտօնաթերթը, որ քիչ ատենէն շաբաթաթերթի պիտի վերածուի՝ եթէ Ամերիկայէն ապսպրուած հայերէն տառերը ստացուին»⁵⁷: Ասիկա ենթադրել կու տայ, որ թերթը խմորատիպ էր:

Առաջիկա մեզի յայտնի չեն ուրիշ տուեալներ համայնավար երկշաքաթերթին մասին: Ենթադրելի է, որ ան շարունակուած ըլլալ գոնէ 1925ի առաջին ամիսներուն:

ՈՉ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ (1925-30)

Դաշնակցական, հնչակեան ու յառաջդիմական փորձերը՝ 1923-25ին մամուլ ստեղծելու, կարճատեւ կեանք ունեցած էին, եւ ձախողած՝ նիւթական միջոցներու եւ մարդուժի բացակայութեան բերումով: 1930ականներուն էր, որ այս բոլոր հոսանքները պիտի ստեղծէին հաստատ հիմերու վրայ դրուած պաշտօնաթերթեր:

ՄՈՎՔ

Մինչ այդ, առաջին ոչ-կուսակցական թերթերու հրատարակութիւնը պիտի արձանագրուէր: Ժամակազրական կարգով, պէտք է քննել ցարդ անորոշ պարագայ մը. հայրենակցական առաջին պարբերականի խնդրայարոյց գոյութիւնը⁵⁸:

Արդարեւ, 6 Յունիս 1924ին կազմուած է Անթէպի Երիտասարդաց Ընկերութիւնը, որ գործած է մինչեւ 1933: Ըստ տեղեկութիւններու, Երիտասարդաց Ընկերութիւնը «սկսաւ հրատարակել ամսաթերթ մը “Մովք” անունով, որուն մէջ կը գրուէին ազգային եւ հերոսական դրուագներ»⁵⁹: Հասասեան կը պնդէ, սակայն, որ «պէտք է նշել նաեւ չիրականացած փորձը՝ “Մովք” ամսաթերթը, զոր ծրագրեց, հիմնուելու ատեն, Անթէպահայերու Երիտասարդաց Միութիւնը (Ընկերութիւնը) 1924ին»⁶⁰:

1924 թուականը կրնայ ճիշդ ըլլալ, բայց մեզի կը թուի, որ սխալ է լիշեալ ամսաթերթը որպէս լոյս չտեսած նշել: Արդարեւ, Պատմութիւն Անթէպի հայոցի տեղեկաբերները պէտք է արժանութիւնհայ եղած ըլլան եւ դժուար թէ չտպուած թերթի մը մէջ «ազգային եւ հերոսական դրուագներ» գրի առնուած ըլլան:

Մովքն որեւէ թիւ յայտնի չէ մեզի, ոչ ալ մատենագէտները նշած են անունը: Բայց եթէ ստուգապէս լոյս տեսած է, ապա ան կը դառնայ Արժանթիւնի հայրենակցական հնագոյն թերթը:

ԱՐԺԵՆԹԻՆ

Ամէն պարագայի, 1925-1930 հնգամեակին ծագում պիտի առնէին երկու հրատարակութիւններ, զորս իրաւամբ կարելի է կոչել «զարտուղի»՝ արժանթիւնհայ մամուլի ընդհանուր համապատկերին մէջ: Առաջինը *Արժենթիւն* պարբերաթերթն էր, անհատական ու անկախ ընդթի նախաձեռնութիւն մը, առաջինը իր տեսակին

մէջ - բացառելով Մենտոսայի փորձը - իսկ երկրորդը՝ հայ կաթողիկէ համայնքի *La Revista Armenia* ամսաթերթին էր:

Ըստ Լեւոնեանի եւ Պետրոսեանի (առանց հարցման նշանի), *Արժենտինը* լոյս տեսած է 1930(?)ին⁶¹: Կիրակոսեան *Արժենտին* եւ Բարլոյեան *Արժենթին*, որ կը լիշէ շարաթաթերթ ըլլալը, 1929-1931 կը թուագրեն⁶²: Աշոտ Արծրունի գրած է. «Քիչ մը վերջ (Բողոքի Չայնի շիջումէն - Վ. Մ.) լոյս կը տեսնէ առաջին տպագրուած շարաթաթերթը՝ «Արժանթին», իմբ. պրն. Ս. Գազազի, որ կը դադրի 1931ին»⁶³:

Հասասեան իւրացուցած է այս տեսակէտը, «քիչ մը վերջ»ը մեկնաբանելով 1925⁶⁴: Այնուհետեւ, շարունակած է զայն կոչել *Արժանթին* ու «շարաթաթերթ», առանց սկիզբի տարեթիւի, իսկ վախճանը թուագրած է Յունիս 1931ի շուրջ⁶⁵: Պինայեան - մասամբ հիմնուելով մեր բանաւոր տուեալներուն վրայ - կը գրէ, թէ *Արժանթին* (sic) լոյս տեսած է 1927էն մինչեւ 1930, ու լիշած, որ 71րդ համարը Մայիս 1930ին էր⁶⁶:

Այս թերթին մասին անհրաժեշտ են քանի մը ճշդումներ: Նախեւառաջ, անուանաթերթին վրայ գրուած է «Արժենթին-ազատ եւ անկախ հայաթերթ», ուստի *Արժանթին* ձեւը սխալ է: Ինչ կը վերաբերի թուագրումի հարցին, Վիեննայի Միխիթարեաններու հաւաքածոն (ըստ Կիրակոսեանի՝ միակը), կը պարունակէ 50-71րդ թիւերը, որոնք ամսական պարբերականութիւն ունին, 20 Օգոստոս 1928էն մինչեւ 31 Մայիս 1930: 20 Օգոստոսի թիւը ունի «2րդ տարի» նշումը. ասիկա ցոյց կու տայ, որ թերթը հիմնուած է 1927ին, թերեւս՝ իբրեւ շարաթաթերթ, եւ յետոյ դարձած է ամսաթերթ: Թերեւս Մայիս 1930էն ետք ան վերածուած ըլլայ երկշարաթերթի. Փարիզի Յառաջի «շրջուն քարոզիչի մը վաւերական տեղեկութիւնները» ենթախորագրուած յօդուածին համաձայն, թերթը լոյս կը տեսնէր «15 օր անգամ մը»⁶⁷: Սարգիս Թոփչեան զայն կը լիշէ իբրեւ «հայ-թրքերէն երկշարաթերթ»⁶⁸:

Այլ տուեալներու չգոյութեան, ընդունելի է *Արժենթինի* շիջումը թուագրել Յունիս 1931, հետեւելով Հասասեանին:

Թերթին տնօրէնն էր Սերգօ Կ. Գազազ: Անուանաթերթին վրայ իր անունը գրուած է Serco G. Casas, ինչ որ կ'ենթադրէ մականունին լատինացումը (հայերէնէ տառադարձութիւնը պիտի ըլլար Kazaz): Մեզի յայտնի ժամանակամիջոցին, թերթը ունեցած է երեք հասցէներ. California 1147 (մինչեւ Յունիս 1929), Melian 4453 (մինչեւ Սեպտեմբեր 1929) եւ Canning 1885 (գէթ մինչեւ Մայիս 1930):

Ըստ Հասասեանի, տպաքանակը 500 էր. զայն խմբագրած է Հրանդ Գլընճեան: Գրաշարները եղած են վահրամ Պաղտասարեան եւ Անդրէաս Գարամանեան⁶⁹:

Չորս էջոց այս թերթը, որուն լեզուն հայերէնն էր, նաեւ լոյս ընծայած է սպաներէն եւ թրքերէն (հայատառ, արաբատառ եւ լատինատառ⁷⁰) յօդուածներ: Այս իմաստով, ան եղած է արժանիքի-նահայ իրականութեան առաջին եռալեզու թերթը եւ ցարդ յայտնի միակը, որ տեղ տուած է թրքերէնին: Այս ձեւով թերթը կ'ուզէր մատչելի ըլլալ նաեւ կաթողիկէ եւ բողոքական համայնքներուն, որոնց մէջ թրքախօս տարրը քիչ չէր:

LA REVISTA ARMENIA

1929ին լոյս կը տեսնէր առաջին հայ կրօնական պարբերականը Պուենոս Այրէսի մէջ *La Revista Armenia* (Հայկական հանդէս)⁷¹, որ կը պատկանէր գաղութի փոքրամասնական կաթողիկէ համայնքին եւ ամբողջովին սպանազիր առաջին թերթն էր⁷² - բացառելով Մենտոսայի պարագան: Լեզուի հարցը կը բացատրուի անով, որ հայ կաթողիկէները ընդհանրապէս հայախօս չէին:

La Revista Armenia լոյս տեսած է իբրեւ «Հայ կաթողիկէ Համայնքի Հոգեւոր Հովուութեան պաշտօնաթերթ» (*Organo de la Asistencia Espiritual de la Colectividad Armenio-Católica*), Հ. Մկըրտիչ վրդ. Գաղեզեանի խմբագրութեամբ: Հաւանական է որ Հ. Գաղեզեան սպանազէտ գործակից մը ունենար, քանի որ Արժանիքին ժամանած էր 1924ին, առանց լեզու իմանալու: Փորձական թիւ մը հրատարակելէ ետք 10 Նոյեմբեր 1929ին («միակ թիւ»՝ numero unico), թերթը ամսէ ամիս լոյս տեսած է Ապրիլ 1930էն մինչեւ Դեկտեմբեր 1957, 16 էջով եւ տետրակի չափով⁷³. հասցէն՝ Condarco 545, ապա (1942էն ետք) Charcas 3529: 1957-1971ին անկէ լոյս տեսած են քանի մը թիւեր, անկանոն կերպով, Հ. Ներսէս վրդ. Գարապաչեանի խմբագրութեամբ: 1971-1975ին թերթը նոր շրջան մը ունեցած է, իբրեւ երկամսեայ ու եռամսեայ, 32 էջով ու հայերէն-սպաներէն բովանդակութեամբ. զայն խմբագրած է Հ. Կղեմէս վրդ. Մալճեան: Այս շրջանին ան լոյս տեսած է 900 օրինակ տպաքանակով⁷⁴:

Նախքան այս ամսաթերթը, համայնքը *El buen mensaje* (բարի լուրը) անունով կիրակնօրեայ լրատու մը հրատարակած է՝ դարձեալ սպաներէն, որ շարունակած է լոյս տեսնել այնուհետեւ, անորոշ ժամանակով⁷⁵:

ԵՌԱՆՆԻ (ՊՐԱԶԻԼԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԹԵՐԹԸ)

Գրեթէ նոյն տարիներուն, Պրազիլի գլխաւոր հայաշատ քաղաքին՝ Սան Փաւլոյի մէջ, սկսած է լոյս տեսնել երկրի հայկական հնագոյն թերթը, որ բացակայ է համահաւաք մատենագիտութեան չորս հիմնական ցանկերէն. անոր փոխարէն իբրեւ առաջին պարբերական յիշատակուած է Ս. Դ. Հ. Կ. Կայծը⁷⁶:

Արդարեւ, 1925ին հիմնուած Հայ Երիտասարդաց Միութիւնը երկու տարի ետք պառակտուած է ներքին պայքարներու հետեւանքով: Անջատողները ստեղծած են Հայ Երիտասարդաց Երկսեռ Միութիւնը, որ Եռանդ խմորատիպ ամսաթերթը լոյս ընծայած է. 1929ին, անոր անդամներէն մաս մը, միանալով Հայ Գաղութային Միութեան հրաժարողներու, հիմնած է Հ. Յ. Դաշնակցութեան Սան Փաւլոյի կոմիտէութիւնը⁷⁷:

Ըստ Գիւտ Մխիթարեանի, թերթը լոյս տեսած է Վահագն Մինասեանի խմբագրութեամբ, որուն օգնականն էր Հրաչ Տեպելեան⁷⁸: Եզնիկ Ա. քհնյ. Վարդանեանի համաձայն, Եռանդի խմբագիրն էր Վ. Մինասեան, խմբագրութեան անդամներ՝ Հրաչեայ Տեպելեան, Գարեգին Թիւֆենկճեան եւ Յարութիւն Գալայճեան, իսկ արտօնատէր՝ Զաքարիա Տեպելեան: Պարբերաթերթին առաջին թիւը հրատարակուած է փետրուար 1928ին. թերթը դադարած է 1931ին: Իւրաքանչիւր թիւ ունէր 24 էջ եւ 30 x 22 չափ⁷⁹:

Այս ամսաթերթը ընդգրկելով դաշնակցական մամուլի ցանկին մէջ, Սիմոն Վրացեան-Ս. Տէր Թովմասեան եւ Դաւիթ Փափաղեան զայն թուագրած են 1928-29⁸⁰: Արտաշէս Տէր Խաչատուրեան յիշատակած է, որ Եռանդը Պրազիլի անդրանիկ հայ թերթն է եւ զայն թուագրած է՝ 1928-1931: Նշած է նաեւ, որ խմբագրական կազմին անդամ էին Զ. Տեպելեան, Վ. Մինասեան, Գ. Թիւֆենկճեան, Յ. Գալայճեան եւ Հ. Տեպելեան, առանց զատորոշելու անոնց պաշտօնները⁸¹:

Տ. Եզնիկ հրատարակած է Եռանդի թիւի մը կողքը. հոն յստակօրէն կը տեսնուի, որ անիկա համարուած է «ազգային, գրական, գեղարուեստական, մարզական օրկան Հայ Երիտ[ասարդաց] Երկս[եռ] Միութեան»⁸², եւ ոչ թէ սոսկ «մարզական օրկան», ինչպէս կը գրէ Տէր Խաչատուրեան⁸³:

Ինչ կը վերաբերի հանդէսի շիջումի թուականին, չենք կրնար բոլորովին ստոյգ համարել 1931ը, քանի որ Եզնիկ քհնյ. կը լիշէ, թէ Կայծ թերթը լոյս տեսած է «մինչեւ 1932ի վերջը» հրատարակուող Եռանդի խմորատիպ մեքենայի գնումով⁸⁴: Չենք գիտեր եթէ հակասութիւնը փաստական բնոյթ ունի կամ պարզ գրաշարական սխալ մըն է:

1930ԱԿԱՆՆԵՐ

1930ականներուն Արժանթինի հայ գաղութի արդէն կազմակերպ հոսանքները (դաշնակցական, հնչակեան եւ համայնավար) պիտի ունենան իրենց սեփական պաշտօնաթերթերը: Հ. Յ. Դ. ն իր օրկանը պահած է մինչեւ օրս, իսկ հնչակեաններն ու համայնավարները (վերջիններս՝ տարբեր անուանափոխութիւններով)՝ մինչեւ 1990ականներու սկիզբները⁸⁵:

Մամուլի այս կայունացումը պէտք է դիտել գաղթականութեան շրջանի աւարտի ու գաղութի ինքնահաստատումի հոլովութի ծիրին մէջ: Կուսակցութիւնները պիտի ձեռնարկեն իրենց գաղափարներու տարածումին, առ այդ ուժ տալով գրաւոր քարոզչութեան:

Կուսակցական-քաղաքական մամուլի կողքին ծնունդ կ'առնեն նաեւ երկու երկարակեաց թերթեր, որոնք կը պատկանին եկեղեցական (*Հայ Կեդրոն*) եւ հայրենակցական (*Նոր Հաճըն*) ոլորտին: Առաջինը շուրջ քառասուն տարի լոյս տեսնելէ ետք, մօտ երեսնամեայ դադար մը ունեցած է եւ ընդ շրջանով 1997-1998ին լոյս տեսած, իսկ *Նոր Հաճըն*ը շարունակուած է անխափան մինչեւ այսօր:

Նոյն միջոցին, Պրագիլի մէջ լոյս պիտի տեսնէ առաջին տպագիր թերթը, իսկ Ուրուկուայի մէջ ծնունդ պիտի առնէ հայտառ մամուլ:

ԱՄՄԵՆԻԱ

Տանամեակի առաջին թերթը պիտի ըլլայ Հ. Յ. Դաշնակցութեան օրկանը՝ *Արմենիան*, որ եղած է նաեւ Հարաւային Ամերիկայի միակ օրաթերթը:

Ինչպէս ըսինք վերը, 1925ին Պուենոս Այրէսի Հ. Յ. Դ. մարմինը արդէն գնած էր տպագրական անհրաժեշտ տառերը՝ տպագիր թերթի մը ձեռնարկելու:

Կուսակցութեան վերադաս մարմինը կը թուի կարգադրած ըլլալ խմբագրի մը առաջումը Հարաւային Ամերիկա: Արդարեւ, 3 Սեպտեմբեր 1925 թուակիրով, Ռէն (*Արմենիայի ապագայ խմբագիր*) Փրակայէն հետեւեալը կը գրէր *Հայրենիքի* խմբագիր Ռուբէն Դարբինեանին. «Գուցէ ճանաչես մեր տեղիս ընկերներին՝ Մուշեղ Թամրազեանին (Թանատոս): Նա իր կնոջ հետ ուզում էր վերադառնալ Պարսկաստան, բայց պաշտօն չունէր: Բիւրօն նրան հրաւիրեց Հարաւային Ամերիկա գնալու՝ Բիւէնոս-Այրէսում գործիչ-խմբագրի պաշտօնով: Ծուտով մեկնելու է իր գործի վայրը»⁸⁶:

Որքան ծանօթ է, թամրագեան չէ եկած հարաւամերիկեան ասփերը⁸⁷ :

Ձեռնարկը ձախողութեան մատնուած էր: Ի շարս այլոց՝ որովհետեւ թերթին խմբագրութիւնը կատարելու ատակ ուժ մը չկար: «Տառ ունէինք, բայց խմբագիր ու գրաշար չունէինք:

Մեր պահանջին տեղի տալով, Բիւրոն իբրեւ խմբագիր-գործիչ Պ. Այրէս ղրկեց Թ[ադէոս] Մեծատուրեանը, որ զգաց թէ դաշնակցական թերթի մը խմբագիր ըլլալու կարողութիւնը չունէր»⁸⁸: 1927ին գալով, վերջինս վեց ամիս մնացած է քաղաքը եւ ապա վերադարձած Փարիզ: 1930ականներուն ան կրկին եկած է Պուենոս Այրէս ու վերջնականապէս մեկնած Փարիզ՝ 1938ին:

1927ին ալ Արժանթին ժամանած է «Նեմեսիս» (Հայկական Յեղասպանութեան թուրք պատասխանատուներու ասարեկումի) գործողութեան մասնակից Արամ Երկանեանը, որ կուսակցական աշխատանքի անցնելով, Վենետիկէն գնուած ու չգործածուած տառերով 1930ին հաստատած է «Մասիս» տպարանը (հասցէ՝ J. A. Cabrera 4621), տպագրելով երեք գրքոյկ (քերականութեան անխորագիր տետրակ մը՝ 1930ին, եւ Յովհաննէս քհնյ. Ամիրեանցի քարոզներու երկու հատորիկներ՝ Ճշմարտութեան ձայնը, 1930ին եւ 1931ին⁸⁹:

16 Փետրուար 1931ին որոշում տրուած է թերթ հրատարակելու, երբ Հ. Յ. Գ. Շրջանային Ա. Ժողովը այդ պարտականութիւնը դրած է Շրջ. կոմիտէին վրայ⁹⁰: Այս նպատակին պիտի ծառայէր Երկանեանի «Մասիս» տպարանը: Հասասեան կը թուի ցոյց տալ, որ տպարանը ստեղծուած է կուսակցութեան յանձնարարութեամբ՝ ծրագրի մը հետեւելով, որուն երկրորդ քայլը եղած է թերթի հրատարակութիւնը⁹¹: Սակայն, որոշումը տրուած է 1931ին, ինչ որ կը մատնանչէ, որ Երկանեան գուցէ կուսակցութենէն ձեռք ձգած է տառերը՝ տպարան բանալու, ցնոր տնօրինութիւն: Հրատարակութեան որոշումէն ետք, ան վերածուած է նորաստեղծ թերթի տպարանին:

Թէեւ Յուշագատում Հ. Յ. Դաշնակցութեան մէջ նշուած են Յ. Թահթաճեանի, Ա. Երկանեանի, Յ. Միրաքեանի եւ Ս. Թոփչեանի անունները որպէս հիմնադիրներ⁹², սակայն Ս. Ֆիրունց շեշտած է, թէ «միանգամայն սխալ կ'ըլլայ այս կամ այն ընկերոջ վերագրել «Արմենիա» չի հրատարակութեան նախաձեռնութիւնը...»⁹³: Յ. Միրաքեան անունով անձ գոյութիւն ունեցած չէ (յայտնապէս պէտք է կարդալ Ա. Մաղաքեան):

Թերթին անունը վէճերու դուռ բացած է: Ատենին, Թահթաճեան առաջարկած էր Հորիզոն⁹⁴: Վանեցի աշխատակիցները՝ գըլ-

խաւորութեամբ Սահակ Բարսեղեանի, քուէարկութեամբ պարտադրած էին Աշխատանք, ի լիշատակ Վանի համանուն թերթին, այնթապցի աշխատակիցներու բացակայութեան, որոնց գլխաւորն էր Թահթաճեան: Բայց նոր քուէարկութենէ ետք, վերջիններուն առաջարկած Արմենիա անունը յաղթանակը տարաւ⁹⁵: Բարսեղեան այսպէս կը լիշէ դէպքը. «Եւ գեղեցիկ օր մը ընկերոջ մը կօշիկի գործարանի կաշիներու վրայ նստած տասնեակ մը ընկերներու որոշումով, հրատարակելի թերթին անունը կնքուեցաւ «Արմենիա»»:

«Երկու շաբաթ վերջ, տարիներ առաջ վենետիկէն բերուած մետրոպեան տառերով [լոյս տեսաւ] Հարաւային Ամերիկայի առաջին հայերէն տպագիր թերթը»⁹⁶:

Արմենիա շաբաթաթերթի առաջին թիւը լոյս տեսած է 26 Ապրիլ 1931ին, չորս էջով: Խմբագիր՝ Սարգիս Թոփչեան, էջմիածնի Գէորգեան ճեմարանի շրջանաւարտ, «միակ ձեռնհաս մտաւորականն էր»⁹⁷: Ֆիրունց կը հերքէ անոր մասնակցութիւնը հիմնադրութեան գործին, պնդելով որ «այդ օրերուն ան նոյնիսկ շաբթերու մէջ չէր ու միայն խմբագրական պաշտօնի բերումով կազմակերպութեան մէջ անցաւ»⁹⁸:

Թերթը սկզբնապէս ունեցած է Saavedra 565՝ Թահթաճեանի հասցէն, ու երեք տարբեր նստավայրեր՝ խմբագրական, վարչական ու տպարանային գործերու համար: Խմբագրատունը ապա փոխադրուած է Canning 1087: Փետրուար 1937էն մինչեւ Հոկտեմբեր 1982, Արմենիայի կեդրոնատեղին պիտի ըլլար El Salvador 4625ի ակումբը: Այնուհետեւ՝ Armenia 1366ի ակումբի նոր շէնքը:

Թոփչեան իր պաշտօնին գլուխը մնացած է մինչեւ Օգոստոս 1932, երբ գինք փոխարինած է Փարիզէն ժամանած նոր խմբագիրը՝ Ռէն (Ռուբէն Վարդանեան)⁹⁹: 14 Փետրուար 1936ին, Արմենիա վերածուած է եւօրեայի¹⁰⁰:

Ռէնի պարտադրուած է հրաժարել Փետրուար 1940ին, իբրեւ հետեւանք կուսակցական ներքին հակամարտութեան մը՝ «ուէնական շարժում»ին, որ աւարտած է շաբթերէն իր հեռացումով: Փետրուար-Հոկտեմբերին, խմբագրութիւնը ստանձնած է Վարդան Գէորգեան¹⁰¹, ապա՝ Հիւսիսային Ամերիկայէն հասած նոր խմբագիր Արսէն Միքայէլեանը: 13 Յունուար 1941ին, եւօրեան դարձած է երկօրեայ:

Ապրիլ 1941ին, Միքայէլեանի անակնկալ մահէն ետք, խմբագրութիւնը երկու ամիսով ստանձնած է Աշոտ Արծրունի, որ Յունիսին իր պաշտօնը զիջած է Թոփչեանին: Վերջինս զայն վարած է մինչեւ մահ (Մարտ 1942)¹⁰²: Այնուհետեւ, Արծրունիի կարճատեւ

պաշտոնավարութենէ մը ետք, Գէորգեան կրկին խմբագրութեան գլուխը անցած է եւ զայն վարած մինչեւ 1960¹⁰³: 11 Սեպտեմբեր 1954ին, Արմենիա դարձած է օրաթերթ, հրատարակուելով շաբաթը վեց օր (4 Հոկտեմբեր 1982էն՝ շաբաթը հինգ օր) մինչեւ 1989, երբ վերածուած է շաբաթաթերթի¹⁰⁴: 1931-1982ին լոյս տեսած է իր տպարանին մէջ:

Յետադու խմբագիր եղած են Յովհաննէս Տեւեճեան (1960-1965), Գէորգեան (1965-1968), Արծրունի (1968-1971), Տեւեճեան (1971), Պետրոս Հաճեան (1971-1986)¹⁰⁵, Յովհաննէս Երկանեան (1986-1987), Խաչիկ Տէր Ղուկասեան (1987-1998):

Մինչ սկզբնական շրջանին Արմենիա միայն հայերէն լեզուով լոյս տեսած է¹⁰⁶, 1943ի պետական հարուածէն ետք պարտադրաբար սկսած է լոյս ընծայել սպաներէն սիւնակ մը՝ առաջին էջին, որ շարունակուած է այնուհետեւ՝ Արժանթինի հանրապետութեան նախագահ Խուան Փերոնի նախագահութեան ժամանակ (1946-1955), ու ապա ջնջուած:

Թերթի երկլեզուեան ընդլայնումը մնայուն հանգամանք ստացած է 1960ականներէն: Արդարեւ, 28 Մայիս 1966-9 Հոկտեմբեր 1971ին, Արմենիա լոյս ընծայած է սպաներէն շաբաթական յաւելուած մը, խմբագրութեամբ՝ Ռուբէն Արծրունիի: 1971-1979ին յաւելուածը դարձած է ամէնօրեայ ներդիր երկու էջ կամ չորրորդ էջ, 1979-1980ին՝ դարձեալ շաբաթական յաւելուած, 1981-1986ին՝ ամէնօրեայ չորրորդ էջ, 1986-1989ին՝ շաբաթական յաւելուած: 1989էն ետք, շաբաթաթերթի վերածումով, հայերէն ու սպաներէն բաժինները լոյս տեսած են շաբթուան տարբեր օրեր, իսկ 1995էն՝ սպաներէնը նորէն հայերէնի յաւելուածն է: 1971-1986ին սպաներէն բաժնի խմբագիր եղած է Ռուբէն Մոզեան, 1987-1990ին՝ Յովհաննէս Երկանեան, 1990-1992ին՝ Փետրո Մուրատեան, 1992էն՝ Ռուբէն Արծրունի:

1931էն մինչեւ այսօր, թերթը լոյս տեսած է հայերէն չորս էջով՝ թէ՛ մեծածաւալ (սաւան) եւ թէ՛ tabloid չափերով (վերջինս՝ 1982էն): 1971էն ետք, ունեցած է սպաներէն երկու ներդիր էջ, կամ սովորական չորս էջերէն վերջինը տրամադրուած է սպաներէն բաժնին: Ներկայիս լոյս կը տեսնէ չորս էջ հայերէն եւ ութ էջ սպաներէն: 1966էն ետք, մերթընդմերթ լոյս ընծայած է նաեւ փորթուկալերէն նիւթեր:

Արմենիայի արտօնատէրեր եղած են Սոկրատ Թերզեան, Յովսէփ Օղուլեան, Յովհաննէս Երկանեան եւ Ռուբէն Սիրուեան (Արծրունի): Հասասեան 1974ին հայերէն թերթին համար կը նշէր

5000 տպաքանակ, իսկ 1966-1971ի լուսվածքին համար՝ 4000¹⁰⁷, 1980ականներուն, անոր տպաքանակը շուրջ 2000 էր:

ՀԱՅ ԿԵՂՐՈՆ

Յաջորդ հրատարակութիւնը բոլորովին տարբեր եղած է: Արդարեւ, Սեպտեմբեր 1930ին պետականօրէն ճանչցուած Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, որ իրաւական յաջորդն էր 1922ին հիմնուած Հայ Գաղութային Կեդրոնին ու ժողովրդային ճանաչումի արժանացած՝ «Հայ Կեդրոն» անունով, նոյն անունով պիտի կնքէր իր ամսաթերթը:

Հայ Կեդրոն լոյս տեսած է Հոկտեմբեր 1932էն մինչեւ Հոկտեմբեր 1970¹⁰⁸: Երկարատեւ դադարէ մը ետք, ան վերհրատարակուած է Հոկտեմբեր 1997-Սեպտեմբեր 1998ին որպէս եռամսեայ (ընդամէնը չորս թիւ): Խմբագիրներու ցանկը, մօտաւոր տեւողութեամբ, հետեւեալն է. Իսրայէլ Արսլան (1932-1937, 1940-1952), Թադէոս Մեծատուրեան (1937-1938), Գարեգին արք. Խաչատուրեան (1938-1940)¹⁰⁹, Սիոն արք. Մանուկեան (1952-1954), Յարութիւն Մ. վրդ. Մուշեան (1954-1959)¹¹⁰ եւ Բարկէն արք. Ապատեան (1959-1970)¹¹¹: 1997-1998ին, արտօնատէր էր Խուան Գարլոս Թիւֆենքճեան, խմբագիր (սպաներէն բաժնի)՝ Նելիտա Պուլղուրճեան-Թիւֆենքճեան, խմբագրական մարմնի անդամներ՝ Գիսակ արք. Մուրատեան եւ Վահան Տէր Ղեւոնդեան:

Իր առաջին շրջանին, Հայ Կեդրոն լոյս տեսած է հայերէն, հիւրընկալելով սպաներէն նիւթեր դիպուածական կերպով: Նոր շրջանին, թերթին լեզուն սպաներէնն է, հայերէն պատահական յօդուածներով:

Թերթին ծաւալը տարուերեւած է 16էն 40 էջի միջեւ: Առաջին երկու թիւերը (Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր 1932) լոյս տեսած են «Արարատ» տպարանէն: Յունուար 1933էն սկսեալ, թերթը օժտուած է իր սեփական տպարանով, որմէ լոյս տեսած է մինչեւ 1950ականներու վերջերը (հանդէսի չափով), այնուհետեւ հրատարակուած է «Արարատ» տպարանէն - որ նախորդին հետ կապ չունի - տետրակի չափով:

Տպաքանակի մասին, նշելի է, որ Արշակ Չօպանեանի յօդուածներին նուիրուած բացառիկը (15 Յուլիս, 1939) տպուած է 1000 օրինակով, եւ «պատրաստուած [է] այս քանակութիւններով, որպէսզի կարելի ըլլայ օգտագործուիլ նաեւ Ուրուկուայի եւ Պրագիլի մէջ կատարուելիք հանդիսութեանց...»¹¹²: Միւս կողմէ, Դեկտեմբեր 1939ին Գարեգին արք. Խաչատուրեան կը լիչէր, թէ թերթը ունէր 250 վճարող բաժանորդ¹¹³: Այսինքն, սովորական տպաքանակը

եղած է 500 օրինակի շուրջ: Ըստ Հասասեանի, 1960ականներուն Հայ հեղրոն լոյս տեսած է 1200-1300 օրինակով¹¹⁴: Նոր շրջանին, տպաքանակը յայտարարուած է 2000:

ՆՈՐ ՀԱՃԸՆ

Արժանթինահայ գաղութի ակունքները Կիլիկիա են, գլխաւորաբար, ի մասնաւորի՝ Հաճըն, Մարաշ եւ Այնթապ: Ուստի, անբնական չէ, որ մեծաթիւ հաճընցիները, որոնք 1915ին կազմեր էին «Հաճըն» Ընկերութիւնը (1928էն վերանուանուած՝ Հաճնոյ Հայրենակցական Միութիւն), 1930ականներուն կէսերը նախաձեռնէին պարբերաթերթի մը հրատարակութեան:

Փետրուար 1928ին, Սարգիս Ալթունեանի հրատարակութեամբ սկսած էր լոյս տեսնել Հաճըն երկամսեան (Մարտէլի Հայրենակցական Միութեան պաշտօնաթերթ)¹¹⁵: Յուլիս 1936ին, Ալթունեան հրատարած է գործը շարունակելէ եւ թերթը փոխադրուած է Փասատինա (ԱՄՆ)՝ Հայրենակցական Միութեան Ե. Պատգամաւորական ժողովի որոշումով: Յակոբ Պօղոսեան խմբագրած է երեք թիւ, ապա պաշտօնը ստանձնած է Գէորգ Գուշեան մինչեւ Մարտ-Յունիս 1941: Իր հրատարականով, նոյն տարուան Նոյեմբերին թիւ մը եւս խմբագրած է Փանոս Մուշեան, որմէ ետք Հաճըն վերջնականապէս դադրած է¹¹⁶:

Յամենալով այս թերթին գոյութեան մանրամասնութիւններուն վրայ, մեր նպատակն է նախ՝ ցոյց տալ թէ ինչու Պուենոս Այրէսի մէջ հիմնուած թերթը կոչուած է Նոր Հաճըն եւ ապա՝ անդրադառնալ երկու թերթերու յարաբերութեան հարցին:

Նոր Հաճընի սկզբնաւորութեան մասին մատենագէտները շփոթ տեղեկութիւններ ունին: Այսպէս, Պետրոսեան եւ Կիրակոսեան կը թուագրեն 1935¹¹⁷: Բարլոյեան կը նշէ 1940 թուականը եւ թերթը կը նկատէ «շարունակութիւն» «Հաճըն»ի¹¹⁸:

Աչոտ Արծրունի թերթին հիմնադրութիւնը թուագրած է 1933¹¹⁹: Հասասեան սկիզբը չէ թուագրած¹²⁰, ապա տուած է 1935 թուականը¹²¹ եւ վերջապէս անդրադարձած է ճիշդ թուականին՝ Յուլիս 1933, հետեւելով Նոր Հաճըն պատմագիրքին¹²²:

Արդարեւ, Նոր Հաճընի առաջին թիւը լոյս տեսած է Յուլիս 1933ին, ութ էջով եւ 300 տպաքանակով, նախաձեռնութեամբ՝ Ազարիա Պապահեքեանի. հրատարակչական մարմինն ներգրաւուած են Երուանդ Քառամեան, Ղազարոս Արսլանեան եւ Ահարոն Թըլըսըմեան: Խմբագիրը նշանակուած է Արամ Տումանեան (Հարգան)¹²³:

Նկատի պէտք է ունենալ, որ երկար խմորումէ ետք, 1932 Հոկտեմբերին տեղի ունեցած է պառակտում մը՝ դաշնակցական եւ ոչ-

դաշնակցական հաճընցիներու միջեւ: Առաջինները հիմնած էին Նոր Հաճըն Հայրենակցական Միութիւնը¹²⁴: Հետեւաբար, Նոր Հաճըն չէր ներկայացներ բոլոր հաճընցիները, այլ՝ դաշնակցական հատուածը:

Եռամսեայ պարբերաթերթին սկզբնական հասցէն էր Canning 1028. մինչեւ 1940, ան տպուած է Արմենիայի տպարանը, բացառելով կարճ շրջան մը 1936ին, երբ լոյս տեսած է Հայրենակից Թուրարգիսեանի «Հաճըն» (այսպէ՛ս «Իտալ-Հայկական») տպարանին մէջ, որ լուծուած է տպարանատիրոջ անակնկալ մահէն ետք¹²⁵: Այնուհետեւ լոյս տեսած է «Միփան» եւ «Արարատ» տպարաններէն¹²⁶, իսկ 1980ականներէն՝ Մարտարապատ շաբաթաթերթի եւ «Editum» հրատարակչատան մէջ: 1955ին, Նոր Հաճընի խմբագրութիւնը տեղափոխուած է «Հաճըն Տուն» (Canning 2273):

Պառակտումը վերջ գտած է 1940ին, եւ Նոր Հաճըն դարձած է միացեալ Հաճնոյ Հայրենակցական Միութեան պաշտօնաթերթը, վերածուելով երկամսեայի, 16 էջ: Վարիչ-տնօրէն նշանակուած է Ա. Պապահեքեան, խմբագրական մարմնի անդամներ՝ Սոկրատ Թերզեան, Աբրահամ Էօլմեսեքեան (Էօլմէզ) եւ Աբրահամ Գրաճեան¹²⁷:

1940-42ին Թերզեան վարած է թերթին խմբագրութիւնը, այնուհետեւ պաշտօնը ստանձնած է Էօլմեսեքեան, որ հնչակեան Շարժում շաբաթաթերթի խմբագիրն էր եւ զոյգ պաշտօնները վարած է մինչեւ իր մահը: Իրեն յաջորդած են Աբրահամ Գրաճեան (1958-73), Նազարէթ Կոժնունի (ձէրէճեան, 1973-75, 1978-96), Յարութիւն Մ. վրդ. Մուշեան (1975-78), Յակոբ Գոփուշեան (1996էն)¹²⁸:

Յամենայնդէպս, 1941ին ամերիկահայ Հաճընը դադրած էր, եւ միայն 1946ին, Հաճնոյ Հայրենակցական Միութեան Է. Պատգամաւորական Ժողովը որոշեց Կեդրոնական Վարչութիւնը Միացեալ Նահանգներէն տեղափոխել Պուենոս Այրէս եւ Նոր Հաճընը ընդունիլ իբրեւ Հայրենակցական Միութեան պաշտօնաթերթ¹²⁹:

Յունուար 1963ին, Նոր Հաճըն վերածուած է ամսաթերթի: Սակայն, Յուլիս-Օգոստոս 1974ին սկսած է լոյս տեսնել իբրեւ երկամսեայ, իսկ Յունուար-Մարտ 1982ի թիւով դարձած է եռամսեայ, 32 էջով: Մինչեւ 1960ականները միայն հայերէնով լոյս տեսնէլ ետք, ներկայիս երկլեզու է: 1970-80ականներուն տպաքանակը 1000 էր, այժմ՝ 600:

ՇԻՐԱԿ-ՎԵՐԵԼԻՔ

Հ. Յ. Դէն ետք, կանտնաւոր մամուլ հրատարակող երկրորդ քաղաքական հոսանքը եղած է յառաջդիմականը: Ինչպէս ամէն եր-

կիր ուր այդ ուղղութեան թերթեր ենթարկուած են սեղմումներու, նաեւ Արժանթինի հայ համայնավար մամուլը լոյս տեսած է ընդհատումներով, պարբերական խափանումներով կամ անունի փոփոխութիւններով:

Շիրակի հրատարակութեան թուականներուն մասին գոյութիւն ունի կարեւոր թիւրիմացութիւն մը: Արդարեւ, Լեւոնեան զայն թուագրած է 1929-1934, 29x46 սմ. չափով եւ բնորոշած որպէս «պարբերաթերթ»: 1934ը, լիշենք, գիրքին հրատարակութեան տարին է¹³⁰: Պետրոսեան բառացիօրէն ընդօրինակած է Լեւոնեանի տուեալները եւ աւելցուցած իր գտածը, այսպէսով ունենալով Շիրակ անունով երկու թերթ, մէկը՝ «պարբերաթերթ», 1929-1934ին (46x29 սմ.), միւսը՝ «քաղաքական, հասարակական եւ գրական շաբաթաթերթ», 1933-1936ին (60x48 սմ.)¹³¹: 1933-34ին համանուն երկու պարբերականներ իբրեւ թէ եղած են նոյն քաղաքին մէջ:

Կիրակոսեան փորձած է հաշտեցնել Պետրոսեանի տուեալները. ան մէկ Շիրակ կ'արձանագրէ, լոյս տեսած 1929-1936ին, որուն 1933-36ի հաւաքածոն պահուած է Մատենադարանը եւ Ազգային Գրադարանը¹³²: Բաբլոյեան կը կրկնէ 1929-1936 թուագրումը («քաղաքական, հասարակական եւ գրական շաբաթաթերթ»), երկու չափերով (46x29 եւ 68x48), աւելցնելով. «բացառիկ համար, 1932ին»¹³³:

Արծրունի կը գրէ. «Պուէնոս Ալրէսի մէջ լոյս տեսած է նաեւ Հօկի հրատարակութիւն Շիրակ անուն շաբաթաթերթը, որ միայն երեք տարի կեանք կ'ունենայ եւ կը դադրի Հօկի կազմալուծումէն անմիջապէս վերջ»¹³⁴: Նկատի ունենալով ՀՕԿի (Հայաստանի Օգնութեան Կոմիտէ) լուծարումի պաշտօնական թուականը՝ 3 Դեկտեմբեր 1937¹³⁵, պարզ հաշիւ մը՝ «միայն երեք տարի կեանք»ը կը դնէ 1934-1937ին:

Սկիզբը, Հասասեան իւրովի մեկնաբանած էր Արծրունիի հաղորդումը, գրելով թէ «Արմենիայէն ետք հիմնուեցաւ 1936ին, ներկայացնելով տարբեր հոսանք մը, Շիրակը, Հայաստանի Օգնութեան Կոմիտէի շաբաթական օրկան: Այս կոմիտէն վերջ գտաւ 1939ին եւ, լուծուելով, իր մամուլի բանքերը փոխեց իր անունը (...)»¹³⁶: ՀՕԿի լուծարքի թուականը սխալ է, ինչ որ նոր սխալի առաջնորդած էր հեղինակը:

1989ին, Հասասեան որդեգրած է Կիրակոսեանի 1929-1936 թուագրումը, լիշելով երկու չափերու գոյութիւնը ըստ Պետրոսեանի եւ իւրովի հաշտեցնելով 1933-34ի հակասութիւնը (1929-1933 եւ 1933-1936)¹³⁷: Պինայեան ունի 1933-1936 թուագրումը¹³⁸, Հասասեանի բանաւոր հաղորդումին հետեւելով:

միշտ վերջինն է, ի հարկէ, եւ դժուար է ըսել ուրիշ բխած է 1929 թուականը: Արդարեւ, Շիրակի Ա. տարուան անդրանիկ թիւը լոյս տեսած է 29 Նոյեմբեր 1933ին: Հասցէն՝ Matheu 1450, ուր հաստատուած էր «Երեւան» տպարանը: Թէեւ անուանաթերթը կը կրէ «քաղաքական, հասարակական եւ գրական շաբաթաթերթ» բնորոշումը, բայց ճշդուած է, որ «առ այժմ 15 օր անգամ մը» լոյս պիտի տեսնէ: Հոս որեւէ լիշատակութիւն չկայ նախընթաց Շիրակի մը: Այսուհանդերձ, խմբագրականին մէջ կը կարգանք. «Նախապէս հրատարակած պիւլէթինով ըսած էինք ինչ՝ հարկաւոր էր մեր թերթի ուղղութեան մասին: Կը կրկնենք անգամ մը եւս. Շիրակ ունէ կուսակցութեան օրկանը չէ. պիտի կանգնի անկուսակցական հողի վրայ, սակայն անբովանդակ գաղափարներ չպիտի սնուցանէ»¹³⁹:

Այդ «պիւլէթին»ին մասին չաւելեալ տեղեկութիւններ չկան: Թերեւս փորձնական թիւ մը եղած ըլլայ: Հազիւ թէ նոյնանայ Բաբլոյեանի լիշատակած 1932 թուականի բացառիկին հետ, որ գուցէ - վրիպակի պարագային - ակնարկ է Շիրակի 1934ի ութ էջոց բացառիկին, նուիրուած՝ Խորհրդային Հայաստանի 14րդ տարեդարձին¹⁴⁰:

Թերթին հրատարակիչը, ըստ էութեան, Շիրակի Բարեկամներու Միութիւնն էր, որ Օգոստոս 1934ին գումարած է համաժողով մը¹⁴¹: Պետրոսեան եւ Բաբլոյեան թերթը կը լիշեն որպէս «օրգան հայրենակցական-վերաշինութեանց Միութեան» կամ «վերաշինաց Միութեան»¹⁴²: Այս անունը բոլորովին բացակայ է Շիրակի էջերէն:

Շիրակ շաբաթաթերթի վերածուած է 4 Մայիս 1935ին եւ լոյս տեսած չորս էջով, ամբողջովին հայերէն: Ըստ Բաբլոյեանի, խմբագիրը Աբրահամ Գրաճեանն էր¹⁴³, թէեւ այս տուեալը թերթին մէջ լիշուած չէ:

Դադրեցումի թուականը յայտնի չէ: Հայաստանի Ազգային Գրադարանի պակասաւոր հաւաքածոյի վերջին՝ 8 Օգոստոս 1936 թիւին մէջ ակնարկ չկայ այդ մասին:

Արծրունի եւ Հասասեան գալն կը համարեն ՀՕԿի պաշտօնաթերթ, դադրեցումը կապելով այդ կազմակերպութեան լուծարքին¹⁴⁴: Սակայն, առաջին թիւին մէջ, ՀՕԿի Արժանթիւնի Կեդրոնական Դիւանը Շիրակը կը լիշատակէ լոկ որպէս ՀՕԿի բարեկամ¹⁴⁵: Ասկէ զատ, դժուար է, որ թերթը դադրած ըլլայ կազմալուծումէն աւելի քան տարի մը առաջ: Այլ տուեալներու բացակայութեան, Շիրակի դադրեցումը պէտք է թուագրել 1936:

Անոր յաջորդած է վերելք անունով պարբերաթերթ մը, «որ հազիւ մէկուկէս տարի կեանք կ'ունենայ», ըստ Արծրունիի¹⁴⁶։ Հաստատան սկիզբը վերելքը թուագրած էր 1939-40¹⁴⁷, աւելի ուշ՝ 1937-39¹⁴⁸, որ ամէնէն հաւանականը կ'երեւի։ Պարզ 1936-42 թուագրումին¹⁴⁹, մինչ սկզբնաւորումի տարեթիւը կրնայ ընդունելի ըլլալ, անհաւանական կ'երեւի վեց տարուան տեւողութիւն մը։

Վիճելի է նաեւ վերելքի խմբագրի անունը։ Հաստատան կը գրէ Գրիգոր Կէօնճեան, իսկ Բաբլոյեան՝ Մուշեղ Արխանեան¹⁵⁰։ Բացառուած չէ, որ առաջինը արտօնատէրը եղած ըլլալ, իսկ երկրորդը՝ խմբագիրը։

ԿԱՅԾ

Այս տասնամեակին արձանագրուած է պրագիլահայ մամուլի երկրորդ անունը՝ Կայծը։ Ապրիլ 1931ին, Սան Փաւլոյի մէջ հիմնուած է Ս. Դ. Հնչակեան «Վանիկ» Ուսանողական Միութիւնը, որ Մայիս 1932ին նահանգային իշխանութեան կողմէ պաշտօնապէս ճանչցուած է։ Կանոնաւորելով իր կազմակերպական աշխատանքները, Միութիւնը նոյն տարուան Նոյեմբերին հիմնած է Կայծ պարբերաթերթը¹⁵¹։

Այս հրատարակութեան առաջին թիւը լոյս տեսած է Յունւար 1933ին, Եռանդի խմորատիպ գործիքի զնումով։ Կողքին վրայ գրուած է՝ «ամսագիր ազգային, գրական, գեղարուեստական եւ մարզական»։ Ունեցած է 20 էջ եւ տպուած է 300 օրինակով։ Հրատարակուած է իբրեւ խմորատիպ մինչեւ Ապրիլ 1935, ընդամէնը՝ 25 թիւ¹⁵²։ Կայծի խմբագրական կազմի անդամ էին Յակոբ Ազատեան, Մ. Մարտիրոսեան եւ Երուանդ Կարմրակ (Մխիթարեան)¹⁵³։

Մարտ 1934ին, կուսակցութեան Ա. Պատգամաւորական Ժողովը որոշած է Կայծ ամսաթերթի տպագրեալ հրատարակութիւնը, որուն անդրանիկ օրինակը լոյս տեսած է 23 Օգոստոս 1935ին¹⁵⁴։ Կայծի արտօնատէրն էր Պետրոս Նազարեան, խմբագիրը՝ Ե. Կարմրակ, իսկ գրաշարները՝ Պետրոս Քեչեճեան եւ Անդրանիկ Պիւճիքեան։ Տպուած է «Մֆինճ» տպարանը՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն բերուած տառերով։ Տպաքանակը եղած է 1000 օրինակ։ Լոյս տեսած են 22 թիւեր մինչեւ 15 Մարտ 1937¹⁵⁵։

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԵՐ

1930ականներուն Պ. Ալրէսի հայկական դպրոցներու ցանցի մը ստեղծումը (15 դպրոց՝ 1934ին, 949 աշակերտով) պատճառ եղած է, որ ծնունդ առնէ գաղութի առաջին մանկական թերթը։

«Նոր Սերունդի էջը» վերտառութեամբ սիւնակ մը սկսած է երևիլ Հայ Կեդրոնի մէջ Սեպտեմբեր 1933էն, որ «Հայ Կեդրոնի յաւելուած» նշումով վերածուած է առանձին ամսաթերթի մը Նոյեմբեր 1934ին: Լոյս տեսած է 8էն 16 էջ ծաւալով, ամէն ամսու 15ին¹⁵⁶:

Այս թերթի մասին ալ գոյութիւն ունին իրարամերժ թուագրումներ. Կիրակոսեան կը գրէ 1934-36-40, հիմնուելով այդ տարիներու առանձին համարներու գոյութեան վրայ (Վիեննայի Մըխիթարեաններու մօտ կայ 1934-1938ի հաւաքածոն)¹⁵⁷: Գասապեան կը նշէ 1936 եւ շարունակելի, դիտել տալով, որ «այսքանը ինձ ծանօթ է»¹⁵⁸: Բարլոյեան կու տայ 1934-37, 1940-41 թուականները, նշելով որ երկրորդը «Նոր շրջան» էր¹⁵⁹: Հասասեան գրած է սկզբնապէս 1935¹⁶⁰, ապա՝ 1935-42¹⁶¹:

Արդարեւ, 1938ին դադրելէ ետք, ամսաթերթը վերհրատարակուած է Յուլիս 1940էն¹⁶² մինչեւ Սեպտեմբեր 1942, երբ թուղթի սղութիւնը պատճառ եղած է դադրեցումի, ատեն մը եւս իբրեւ յատուկ սիւնակ հրատարակուելով Հայ Կեդրոնի մէջ:

Գլխաւորաբար դպրոցական աշակերտներու գրութիւններով լեցուած այս ամսաթերթը խմբագրած են Արսլանեան Կեդրոնական Վարժարանի (Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Հոգաբարձութեան կից) իրերայաջորդ տնօրէնները՝ Հրանդ Գլընճեան (1934-38) եւ Վարդան Գէորգեան (1940-42):

ՄՈՆԹԷՎԻՏԷՕ (ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԸ) - ԳԱՅՍԵՐԻ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍՏՂ

Մինչեւ օրս Ուրուկուայի հայ մամուլը բացակայ է բոլոր մատենագիտական ցուցակներէն, հակառակ անոր որ հոն լոյս տեսած են աւելի քան քսանեակ մը թերթեր: Այս մասին եղած բոլոր անդրադարձները, բացառաբար, կը պարտինք Հասասեանին: Մինչ սկզբնապէս ան չիշած է Արծուի Հայաստանի պարբերաթերթը (1951)՝ իբրեւ առաջին ուրուկուահայ հրատարակութիւն¹⁶³, ներկայիս առաջնութիւնը ընծայած է Մոնթէվիտէօ անունով նորայայտ պարբերականին¹⁶⁴:

Արժենթինի հրատարակիչ Սերգօ Փազազ 1931էն ետք հաստատուած է Մոնթէվիտէօ ու հիմնած՝ առաջին հայկական տպարանը, «Փազազեան» անունով (հասցէ՝ San Martin 3260)¹⁶⁵, որմէ դուրս ելած է Մոնթէվիտէօն: Թէեւ Հասասեան կ'ըսէ, թէ թերթին առաջին թիւը լոյս տեսած է Մայիս 1937ին¹⁶⁶, իր իսկ կողմէ թարգմանուած կարգ մը ծանուցումներու բնագիրները քաղուած են թերթի երրորդ համարէն, որ 24 Ապրիլ 1937 թուագրուած

է¹⁶⁷։ Թերթին վեցերորդ համարը 31 Յուլիս 1937 թուականը կը կրէ, ուստի ենթադրելի է, որ «ազատ եւ անկախ առաջին հայաթերթ» վերտառութեամբ լոյս տեսած *Մոնթէլիտէօն*¹⁶⁸ եղած ըլլայ ամսաթերթ, եւ որ առաջին թիւը լոյս տեսած ըլլայ նոյն տարւան Յունուարի վերջերը։ Տեւողութիւնը յայտնի չէ։

*Մոնթէլիտէօն*ի զուգահեռ, լոյս տեսած է նաև *Փայսերի* պարբերաթերթը։ Արդարեւ, Յուլիս 1937ի թիւը ունի այդ թերթին բաժանորդագրութեան ծանուցումը, զոր կարելի էր իրագործել առանձինն, թէ *Մոնթէլիտէօն*ի հետ միասին։ Ասիկա ենթադրել կու տայ, որ հրատարակիչը նոյնն էր. Գազազի կեսարացի ըլլալը կը բացատրէ թերթին անուանումը։ *Փայսերի*ի հրատարակութեան սկզբնաւորութիւնը, տեւողութիւնն ու բովանդակութիւնը յայտնի չեն. ծանուցումին մէջ միայն յայտարարուած է, թէ կիսամսեայ է եւ շուտով պիտի դառնայ շաբաթաթերթ։ Թերթին վերագրել էինք, լոկ ենթադրաբար, հայրենակցական մամուլի բնոյթը, դատելով անունէն¹⁶⁹։

Սակայն, քաղաքին թրքական անունին գործածութիւնը աւելի հաւանական կը դարձնէ – ինչպէս Հասասեան եւս կը կարծէ (անձնական հաղորդում) – որ թերթը թրքալեզու եղած ըլլայ, ինչ որ կը բացատրէ երկու թերթերուն համաժամանակեայ լոյսընծայումը եւ *Փայսերի*ի աւելի յաճախակի հրատարակութիւնը։ Արդարեւ, Ուրուկուալի հայ գաղութին կարեւոր մէկ տոկոսը թրքախօս էր։

Այս փաստը նոյնքան պերճախօս է, երբ նկատի ունենանք որ ուրուկուահայ ցարդ յայտնի երրորդ թերթը՝ *Արեւելեան Աստղ* ամսաթերթը (աւետարանական), սկսած է հրատարակուիլ Մարտ 1939ին, հայերէն եւ հայատառ թրքերէն¹⁷⁰։ Խմբագիրը եղած է Յարութիւն Ահարոնեան. թերթը լոյս տեսած «Ջաքարեան» տպարանէն (Laureles 815 փողոց)։ Թերթին տեւողութիւնը անյայտ է։

ՇԱՐԺՈՒՄ

14 Յուլիս 1936ին, Սան Փաւլոյի մէջ գումարուած է Ս. Դ. Հ. Կ. Հարաւային Ամերիկայի Շրջանային Ա. Պատգամաւորական Ժողովը։ Այս ժողովէն ծնունդ առած է Պուենոս Այրէսի հնչակեան ապագայ պաշտօնաթերթը՝ *Շարժումը*¹⁷¹։ Կուսակցութեան վարիչ Մարմինը, որուն կեդրոնը Նիւ Եորք էր, 1935ին որոշած էր *Կայծը* փոխադրել Պուենոս Այրէս, նկատի ունենալով այս քաղաքի աւելի հայաշատ բնոյթը։ Սակայն, Ա. Պատգամաւորական Ժողովը որոշած է որ, տեղափոխումի փոխարէն, նախընտրելի էր նոր թերթ մը հիմնել Պուենոս Այրէս՝ իբրև շրջանի պաշտօնաթերթ, Սան Փաւլոյի *Կայծը* վերածելով այս քաղաքի մասնաճիւղի բանբերի, եւ

նախատեսելով Մոնթեվիդեոյի մէջ հնչակեան թերթի մը հրատարակութիւնը, որ չէ իրականացած¹⁷²:

Սակայն, 1937ին, Պրազիլի քաղաքական նոր կարգերը ժեթուլիստ վարկասի երկարատեւ մենատիրութեան սկիզբը) արգիլած են օտար քաղաքական բոլոր կազմակերպութիւններուն գործունէութիւնը, ինչ որ դարձած է Կաթի խափանումի պատճառը: Հետեւաբար, Պուենոս Այրէսի մէջ գումարուած Շրջանային Բ. Պատգամաւորական ժողովը 19 Մայիս 1937ին որոշած է Շարժումի հրատարակութիւնը, մէկդի դնելով «Նայիրի» անունը որդեգրելու առաջարկը¹⁷³:

Շարժում շաբաթաթերթի առաջին թիւը լոյս տեսած է 19 Յունիս 1937ին, Քսան Կախաղաններու նոր տարելիցի մը առիթով¹⁷⁴: Ան դադրած է Յունիս 1991ին, գրեթէ 55 տարի անընդմէջ հրատարակութենէ ետք:

Հնչակեան այս շաբաթաթերթին հրատարակութեան թուականներու մասին ալ գոյացած է շփոթ մը: Պետրոսեան զայն թրւագրած է 1944-47ին¹⁷⁵, անհասկնալի կոռուաններու հիման վրայ: Փասապեան սրբագրած է Պետրոսեանը, բայց բաւական տարօրինակ կերպով. նախ կը յայտնէ թէ «այս թերթի հրատարակութիւնը ծանօթ է մեզ 1937 թ. ցարդ կը շարունակուի», ինչ որ բնականօրէն ճիշդ է, բայց աւելի անդին կը թուագրէ 1937-39¹⁷⁶: Կիրակոսեան տարօրինակ հաշտեցում մը կը փորձէ՝ կը ցանկագրէ երկու Շարժում (1937-39ին, ըստ Փասապեանի¹⁷⁷, եւ 1944ին, ըստ երեւոյթին յենելով Պետրոսեանի)¹⁷⁸: 1990ին, Հրանդ Փանգրունի հակասական պատկեր մը տուած է. ան կը գրէ. «1937ին, Արժանթինի մէջ, «Շարժում» շաբաթաթերթը կը հիմնուի: ...Թերթը ցարդ կը շարունակուի», մինչ թերթերու իր ցանկին մէջ Շարժումը 1944-60 թուականով կը լիչէ¹⁷⁹, կրկնելով 1960ի իր թուագրումը¹⁸⁰: Բարլոյեան լուծած է թնճուկը, 1937-80 գրելով¹⁸¹:

Մինչ 1980 թուականը շաբաթաթերթը լոյս տեսած է մեծադիր չափով, 4 էջ: Այնուհետեւ անցած է tabloid չափի, 8-12 էջով: Առաջին շրջանին միայն հայերէնով լոյս տեսնելէ ետք (բացառելով 1943-55 շրջանը, երբ մէկ սիւնակ սպաներէն պարտադրուած էր տպելու), 1970ականներու կէսերէն սկսած է լոյս տեսնել երկլեզու բովանդակութեամբ: Պատահական կերպով հիւրընկալած է նաեւ փորթուկալերէն նիւթեր:

Խմբագիրներու ցանկը, ըստ Շարժումի 1983ի խմբագրականին, հետեւեալն է.- Տաճատ Գնդունի (Միւթեվելլեան), Ե. Կարմրակ, Յակոբ Մարկոսեան, Աբրահամ Էօրմեսեքեան, Վահան Զէյթունցեան, Ալպերթ Քէօսէեան, Աբրահամ Գարատանեան, Նա-

զարեթ Կուժնունի (ձէրէճեան), Կիրակոս Աջապահեան, Վարուժան Աճեմեան եւ Սամօ Սարգիսեան¹⁸²: Բարբլոյեան հետեւեալ ցանկը կու տայ. «Ար. Օլմասարգեան, Վահան Զէյթունցեան, Ն. Կուժնունի (Նազարէթ Զէրէճեան), ապա՝ Գէորգ Տէր-Մկրտչեան, Վարուժան Աճեմեան, Սամուէլ Սարգիսեան»¹⁸³:

Հաստեան ունեցած է երկու ցանկագրում, առաջինը՝ 1974ին (Տ. Գնդունի, Ե. Կարմրակ, Մ. Օշին, Ա. Էօլմեսեքեան՝ 1939-58, Վ. Զէյթունցեան, Աբրահամ Գրաճեան, Յ. Մարկոսեան, Ա. Գարատանեան, Ն. Կուժնունի եւ Վ. Աճեմեան)¹⁸⁴, միւսը՝ 1989ին՝ (Տ. Գնդունի, Ե. Կարմրակ, Մ. Օշին, Ա. Էօլմեսեքեան՝ 1939-58, Վ. Զէյթունցեան, Ա. Գրաճեան, Յ. Մարկոսեան, Ա. Քէօսէեան, Ա. Գարատանեան, Կ. Աջապահեան, Սուսանա Չալեան, Ն. ձէրէճեան, Վ. Աճեմեան՝ 1973-76, Ս. Սարգիսեան՝ Դեկտ. 1976-91)¹⁸⁵: Պինայեան այս ցանկէն կը զեղչէ Աջապահեանը եւ Չալեանը¹⁸⁶:

Կը փորձենք հետեւեալ ձտաւոր ցանկագրումը.՝ Տ. Գնդունի, Մ. Օշին եւ Ե. Կարմրակ¹⁸⁷ (1937-39), Ա. Էօլմեսեքեան (1939-58), Վ. Զէյթունցեան (1958-59), Ա. Քէօսէեան եւ Ա. Գարատանեան, Ն. ձէրէճեան (1959-62)¹⁸⁸, Ա. Գրաճեան, Յ. Մարկոսեան, Կ. Աջապահեան¹⁸⁹, Նազարէթ Կուժնունի (1966-69), Վ. Աճեմեան (1969-76)¹⁹⁰, Ս. Սարգիսեան (1976-91):

Շարժումի հիմնադիր-մղիչ ուժեր եղած են Սահակ Պաղչեճեան եւ Կարապետ Էքշեան¹⁹¹, իսկ արտօնատէրեր՝ Սահակ Պաղչեճեան, Մեսրոպ Տատուրեան¹⁹², Աբրահամ Էօլմեսեքեան, Յակոբ Պաղչեճեան, Նազարէթ ձէրէճեան եւ Էտուարտօ Ասիլեան:

1940ԱԿԱՆՆԵՐ

Հասկնալի պատճառներով, պատերազմի տարիները շատ նպաստաւոր չէին Հարաւային Ամերիկայի հայ մամուլի յետագայ զարգացումին համար: Թէեւ շրջանը ռազմական գոտիներէ հեռու էր, սակայն կ'երեւի թէ տնտեսական ու քաղաքական ներքին զարգացումները բերրի հող մը չէին ընծայեր նոր հրատարակութիւններու գոյութեան համար: Կացութիւնը պիտի փոխուէր Բ. Աշխարհամարտէն ետք, երբ տնտեսական բարելաւումն ու ներգաղթի եւ Արեւմտեան Հայաստանի շուրջ պահանջատիրական շարժումի խանդավառութիւնը պատճառ պիտի ըլլային, որ մամուլի նոր անուններ արձանագրուէին:

ՏԱՐԵՅՈՅԹ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՅ

Հարաւային Ամերիկայի մէջ լոյս տեսած առաջին տարեգիրքը, որ առաջնակարգ աղբիւր մըն է այս շրջանի ուսումնասիր-

րութեան համար, լոյս տեսած է հայերէն լեզուով ու Աշոտ Արծրունիի խմբագրութեամբ, 1943ին, «Արմենիա» տպարանէն (352 էջ): Հակառակ խմբագրի խոստումին, թէ «որոշած ենք սոյն տարուան վերջը լոյս ընծայել «Տարեցոյց»ի 1944ի հատորը»¹⁹³, այս տարեգիրքէն լոյս տեսած է միայն մէկ թիւ:

ԱՐԱՐԱՏ¹⁹⁴

Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գարեգին արք. Խաչատուրեան, շուրջ երկու տարի Հայ Կեդրոն ամսաթերթը խմբագրելէ ետք, այդ պաշտօնը ձգած էր՝ Պուենոս Այրէսի Եկեղեցւոյ Վարչական Խորհուրդի հետ ունեցած սկզբունքային վէճերու բերումով: Իր պաշտօնավարութեան շրջանին, ան յաջողած էր թարմ շունչ ներմուծել թերթին, զայն վերածելով կրօնա-բարոյական, գրական եւ բանասիրական միջին ճաշակ գոհացնող պարբերականի մը:

Թէեւ ան յետագային բարելաւած է իր յարաբերութիւնները Վարչութեան հետ, սակայն չէ վերստանձնած Հայ Կեդրոնի խմբագրութիւնը:

Յուլիս 1943ին լոյս տեսած է Պուենոս Այրէսի մէջ Արարատ ամսագրի առաջին թիւը իբրեւ Գարեգին արքեպիսկոպոսի անհատական նախաձեռնութիւն, որ կոչուած էր Հայ Կեդրոնի փորձը վերակենդանացնելու: Թերթին անունը ներշնչուած էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Արարատ երբեմնի պարբերականէն, որ 1918ին խափանուած էր:

Ամսագիրը լոյս տեսած է Յուլիս 1943էն մինչեւ Յուլիս 1947, սակայն երբեմն ունեցած է երկամսեայ կամ եռամսեայ թիւեր: Ապրիլ-Մայիս-Յունիս 1945 եռամսեայ թիւով փակուած է Բ. տարեշրջանը¹⁹⁵ եւ թերթին հրատարակութիւնը ընդհատուած՝ խմբագրի Հայաստան մեկնումով՝ կաթողիկոսական ընտրութիւններուն մասնակցելու: Գարեգին սրբազանի բացակայութիւնը տեւած է մէկ տարի, եւ իր վերադարձով, հանդէսը վերսկսած է Յուլիս-Օգոստոս 1946ի թիւով: Թէեւ պահուած է «հանդէս ամսօրեայ» վերտառութիւնը, սակայն լոյս տեսած է երկամսեայ պարբերականութեամբ՝ մինչեւ վերջնական դադրեցումը:

Յունիս-Յուլիս 1947ի ազդ մը կ'ըսէր. «Նոր շրջանին համար մտադրած ենք «Արարատ»ը վերածել պարբերաթերթի, միեւնոյն ծաւալով եւ բացառիկով մը միասին 13 թիւ ունենալու պայմանով: Բաժնեգիրնը պիտի ըլլայ 15 փեսօ: Նոր շրջանը պիտի սկսինք 1948 նոր տարին, եթէ Աստուած կամենայ»¹⁹⁶: Սակայն,

դադարը վերջնական եղած է. այնուհետև միայն լաւելուածական թիւ մը լոյս տեսած է, անթուակիր:

Թերթը սկզբնապէս միայն հայերէնով լոյս տեսած է: Օգոստոս 1943ի Բ. թիւէն սկսեալ, խմբագրականները տպուած են հայերէն եւ սպաներէն լեզուներով: Արդարեւ, 1943ի պետական հարուածէն ծագած զինուորական վարչակարգը հրովարտակ մը հանած է՝ պարտադրելով օտարայեզու մամուլին սպաներէն յօդուածներ տպել: Յունուար 1944էն, սպաներէն նիւթերու ներկայութիւնը մնայուն դարձած է: Իսկ Արարատի նոր շրջանին, Յունիս-Յուլիս 1946էն, ամսագիրը օժտուած է սպաներէն լաւելուածով, որ առանձին անուանաթերթ եւ համարակալում ունէր¹⁹⁷:

Ա. շրջանին, թերթը (հասցէ՝ Acevedo 1353) տպուած է Արմենիայի տպարանը, Բ. շրջանին՝ «Արարատ» տպարանը (Julian Alvarez 1037): Հայերէն եւ սպաներէն բաժիններու խմբագիրն էր Գարեգին արք.: Թէեւ ան միայն 1938ին սկսած էր շփուիլ սպաներէնի հետ, սակայն լեզուներու իր հմտութիւնը ըստ երեւոյթին դիւրացուցած է իր գործը: Նոր շրջանին, կ'առաջադրուէր «գործօն դեր մը տալ մեր երիտասարդներուն: Ասոր համար կազմեր ենք անոնցմէ խմբագրական Յանձնախումբ մը, մասնաւորապէս կաստիերէն բաժնին համար»¹⁹⁸: «Յանձնաժողով» ըսելով պէտք է հասկնալ, կը կարծենք, սպաներէն բաժնին իբրեւ թարգմանիչներ աշխատակցած մարդոց ցանկը: Կը հետեւցուի, որ խմբագիրը ճշդած է սպաներէն բաժնի բովանդակութիւնը՝ որոշ ծրագրով մը:

ՄԱՍԻՍ

Նոր Մերուենդի դադրեցումէն ետք, մանկական պարբերական հրատարակելու երկրորդ ու վերջին փորձը – բացառելով՝ 1960ականներէն տարբեր դարոցներու աշակերտական թերթերը – դարձեալ ծնունդ պիտի առնէր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Հոգաբարձութենէն:

Մասիս ամսաթերթը լոյս տեսած է դարձեալ Արսլանեան Կեդրոնական Վարժարանի տնօրէններու՝ Վարդան Գէորգեանի (1945-46) եւ Յարութիւն վրդ. Մուշեանի (1953-55)¹⁹⁹ խմբագրութեամբ: Ի տարբերութիւն իր նախորդին, աշակերտներու մասնակցութիւնը շատ աւելի ցանցաւ եղած է: Տեսրակի չափով, լոյս տեսած է 16-32 էջերու տարուբերումով:

Մասիսի առաջին շրջանը երկարած է Ապրիլ 1945էն մինչեւ Սեպտեմբեր 1946: Թերթին մասին թուագրումի տարակարծութիւններ կան: Պետրոսեանի համաձայն, լոյս տեսած է 1950-56ին²⁰⁰, բայց անտեսուած է առաջին շրջանը: Արդարեւ, Կիրա-

կոսեան ունի 1945-46 եւ 1950-56 տարեթիւերը, նշելով հանդերձ 1945-46ի եւ 1953-55ի հաւաքածոները Ազգային Գրադարանի եւ Երուսաղէմի Մատենադարանին մէջ²⁰¹; Բաբլոյեան կու տալ 1945-46 եւ 1953-56 թուագրումը²⁰²; Սկզբնապէս լիշելով միայն հիմնադրութեան տարին՝ 1945²⁰³, Հասասեան տուած է Ապրիլ 1945-չուրջ 1955 թուագրումը²⁰⁴;

Ինչպէս նկատելի է, լիշեալ հաւաքածոներուն մէջ 1950-52 եւ 1956 տարիները չկան: 1947-1952 ընդմիջումի փաստը նշուած է վերհրատարակութեան միջոցին²⁰⁵: Մեզի յայտնի վերջին թիւը Դեկտեմբեր 1955 թուականը կը կրէ, «Ե. տարի» վերտառութեամբ: «Ե. տարի»ն կը ներառնէ առաջին շրջանի երկու տարիները: Հետեւաբար, թերթի դադրեցումը պէտք է տեղի ունեցած ըլլայ Դեկտեմբեր 1955ին:

ՎԵՐՆԷԲ

Պրագիլի մէջ, 1945ին, Ժեթուլիո վարկասի մենատիրութիւնը ստիպուած եղած է քաղաքական ազատութիւն տալու, արտօնելով համաձայար կուսակցութեան զոյուցիւնը եւ դիւանագիտական կապեր հաստատելով Խորհրդային Միութեան հետ: Այս երեւոյթը նաեւ պիտի օգնէր, որ 1945-50ին դադուցին մէջ ծնունդ առնէին շարք մը ամսաթերթեր:

Ժամանակագրական կարգով, առաջինը (յառաջդիմական) եղած է Սան Փաւլոյի Հայ Մշակութային Միութեան *Վերելք* ամսաթերթը, որուն Ա. թիւը լոյս տեսած է 18 Օգ. 1945ին: Այս խմորատիպ ամսաթերթը ունեցած է 11 էջ, փորթուկայերէն եւ հայերէն լեզուներով²⁰⁶: Ան պրագիլահայ առաջին երկլեզու թերթն է:

Թերթին շիջումը պէտք է եղած ըլլայ 1947ի երկրորդ կէսին: Վարկասի տապալումէն ետք, իր յաջորդը՝ Տութրա, այդ տարի նորէն սեղմումներու ենթարկած է ներքին կեանքը եւ դիւանագիտական կապերը խզած է Խորհրդային Միութեան հետ:

Հասասեան լիշած է *Վերելքը*, անթուակիր²⁰⁷: Կիրակոսեան գալն թուագրած է 1947, յայտնելով որ «Հայկական Ընկերութեան Ինֆորմացիոն բիւլետէն» էր եւ որ այդ տարուան 17րդ թիւը (Օգոստոս) Ազգային Գրադարանն է²⁰⁸: Բաբլոյեան նշած է 1946-1947, իբրեւ «Սան Պաուլուի “Հայկ. Միութիւն” մշակութային ընկերութեան» տեղեկատու²⁰⁹:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼ

1945ի վերջերը, Արժանթինի մէջ քաղաքական պայմաններու բարեկաւումը եւ ժողովրդավարական կարգերու մտալուտ վերա-

դարձը թույլ տուած է, որ յառաջդիմական հոսանքը վերստին թերթ հրատարակելու ձեռնարկէ: Այս ուղղութեամբ, ծնունդ առած է Հայ Մամուլ «Ժողովրդային թերթը», որուն առաջին թիւը լոյս տեսած է 8 Սեպտեմբեր 1945ին իբրեւ շաբաթաթերթ:

Հայ Մամուլի թուագրումի մասին ալ գոյութիւն ունին տարակարծութիւններ: Պետրոսեան տուած է «1951, 1955-57 (չարունակում է)» թուագրումը²¹⁰, առանց նշմարելու հրատարակութեան նախորդ շրջանը: Կիրակոսեան 1945-59 թուագրումը ունի²¹¹, թէեւ կը նշէ, որ Ազգային Գրադարանին մէջ 1945-50 եւ 1955-59ի հաւաքածոներ կան: Բարլոյեան կու տայ 1945-50, 1955-60²¹²: Իր կարգին, Հասասեան Հայ Մամուլին վերագրած է 1950-1961 թուագրումը²¹³: Յետագային ճշգրտած է տարեթիւերը՝ 1945-50 (261 թիւ), 1955-1958ի շուրջ²¹⁴:

Սեպտեմբեր 1950ի շուրջ - մեր հաշուով - խափանուելէ ետք կառավարութեան կողմէ²¹⁵, Հայ Մամուլ վերսկսած է հրատարակել 26 Նոյեմբեր 1955ին²¹⁶: 1959ի սկիզբը հրատարակութիւնը նորէն խափանուած է իշխանութիւններու կողմէ, ու թէեւ ճոյն թուականի Սեպտեմբերին թերթի խմբագրութեանը յաջողուեց հրատարակութիւնը շարունակելու իրաւունք ստանալ, սակայն «չուտով նորից փակուեց», հաւանաբար Հոկտեմբերին կամ Նոյեմբերին²¹⁷:

Հայ Մամուլ լոյս տեսած է իր սեփական տպարանէն (հասցէ՝ Malabia 1628), ութը էջով ու երկլեզու (հինգ էջ հայերէն, երեք էջ սպաններէն) բովանդակութեամբ. ծաւալը՝ tabloid: Թերթին արտոնատէրը Գ. Կէօնճեանն էր: Հայերէն բաժնի խմբագիրներ եղած են Մուշեղ Արիսանեան (Ա. շրջան)²¹⁸ եւ Գ. Կէօնճեան (Բ. շրջան)²¹⁹, իսկ սպաններէն բաժնի պատասխանատուն՝ Սարգիս Փափագեան²²⁰:

Առաջին շրջանին հանդիսանալով շաբաթաթերթ, վերհրատարակութեան ժամանակ Հայ Մամուլ վերածուած է եռօրեայի, ապա վերստին շաբաթաթերթ դառնալու համար²²¹: Արմենիայէն զատ, այս թերթը միակը եղած է, որ Հարաւային Ամերիկայի մէջ ունեցած է շաբաթը մէկ անգամէ աւելի պարբերականութիւն:

Հայ Մամուլի կողմէ հրատարակուած է Հայրենի երկիր հատորը, զոր որոշ աղբիւրներ տարեգիրք կը նկատեն²²²: Սակայն, այս հրատարակութիւնը պարբերական ըլլալու յայտարարութիւն չէ ըրած եւ ոչ ալ «տարեգիրք» անուանումը կրած է:

ՅՈՒՍ - ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Պուենոս Այրէսի աւետարանականները 1940ականներու ընթացքին հրատարակած են երկու պարբերաթերթեր՝ հայերէնով:

Ալյավա, Հայ Աւետարանական Եկեղեցին (Rivadavia 4044՝ Մեթո-
տիստ Եկեղեցիի հասցէն) 1944ին²²³ կամ 1945ին²²⁴ լոյս ընծայած է
«ամսական թերթիկ» մը՝ *Յոյս* անունով: Իսկ Յունիս 1946ին Հայ
Աւետարանական Եղբայրութեան Եկեղեցին կը հրատարակէր *Ճշ-
մարտութիւն* անունով չորս էջնոց տեղեկատու մը²²⁵:

ANTORCHA - NAIRI

Յունիս 1946ին, Պուէնոս Այրէսի մէջ ծնունդ առած է առաջին
զուտ սպաներէն հրատարակութիւնը՝ *Antorcha* (Չահ) անունով:
Այս անկախ պարբերաթերթէն լոյս տեսած են երկու կամ երեք
թիւեր, տետրակի ծաւալով եւ 8 էջով, խմորատիպ: Խմբագիրներն
էին երեք երիտասարդներ՝ Վարուժան Գէորգեան, Պերճ Աճեմեան
եւ Ալպերթօ Պայըրճեան: Այնուհետեւ, թերթը անունը փոխած է ու
դարձած՝ *Nairi*, նոյն ծաւալով ու տպագիր, սակայն միայն Գէորգ-
եանի եւ Պայըրճեանի խմբագրութեամբ եւ որպէս ամսաթերթ:
Թերթը շարունակած է *Antorcha*ի համարակալումը եւ լոյս տե-
սած՝ մինչեւ 1946ի վերջերը կամ 1947ի սկիզբները²²⁶:

Հասասեանի այս տուեալներուն կրնանք աւելցնել, որ տեսած
ենք *Nairi*ի հինգերորդ թիւը (այսինքն, երկրորդ կամ երրորդը,
նախորդին համարակալումը չհաշուելով), որ կը կրէ Փետրուար
1947 թուականը:

ԿԵԱՆՔԻ ԺԱՄԲԱՆ

Ուրուկուաճայ մամուլի իր ցուցակին մէջ, *Արեւելեան Աստղի*
(1939) եւ *Արծիւ Հայաստանի*ի միջեւ (1951), Հասասեան կը լիշէ
Կեանքի Ճամբան անունով թերթ մը, անթուակիր²²⁷: Պինայեան
զայն կը բնութագրէ որպէս «բողոքական»²²⁸:

Վերջերս, Տանիէլ Գարամանուկեան լաւելեալ տեղեկութիւններ
հրատարակած է այս թերթին մասին: Թերթին առաջին թիւը
լոյս տեսած է Սեպտեմբեր 1946ին, խմբագրութեամբ Յարութիւն
Ահարոնեանի, որպէս հրատարակութիւն Հայ Ընդհանուր Բարե-
կարգասիրաց Քրիստոնէական Երիտասարդաց Միութեան: Զորս
տարուան ընդհատումէ ետք, երկրորդ թիւը լոյս տեսած է Յուն-
ւար 1950ին²²⁹: Յարդ յայտնի վերջին թիւը՝ վեցերորդը, լոյս տե-
սած է Մայիս 1950ին: Թերթը ունեցած է 8 էջ, հանդէսի չափով:
1946ի հասցէն էր Ciudad de la Paz 224, (կամ 2943), իսթ 1950ին՝
Grecia 3354²³⁰:

ARARAT

Սան Փաւլոյի մէջ, որպէս «անկախ» հրատարակութիւն (ըստ էութեան՝ յառաջդիմական), Հոկտեմբեր 1946ին լոյս տեսած է *Ararat* ամսաթերթը, մեծածաւալ, 6 էջով: Թերթը ամբողջովին փորթուկալերէնով լոյս տեսած պրագիլահայ մամուլի առաջին անունն է: Խմբագիրն էր Թակոբ Պազարեան, խմբագրութեան քարտուղարը՝ Լեւոն Եագուպեան, արտօնատէրը՝ Մէլրի Ափոքալիփս (խմբագրին կինը): Երկու հրատարակիչները արդէն լրագրական որոշ փորձառութիւն ունէին պրագիլական մամուլի մէջ՝ իբրեւ օգնական խմբագիր (Եագուպեան) եւ աշխատակից (Պազարեան)²³¹, ինչ որ զիրենք կը դարձնէ առաջին արհեստավարժ լրագրողները որոնք չըջանի հայ մամուլին մէջ դեր ունեցած ըլլան:

Գասապեան այս թերթը կը թուագրէ 1947-1952..., իսկ Բարլոյեան՝ 1947-1952²³²: Սակայն, Պազարեան 1948ի վերջերը դատական հետապնդումի եւ բանտարկութեան ենթարկուած է, իսկ Ապրիլ 1949ին հաստատուած՝ Փարիզ²³³, ուստի անհաւանական է, որ իր մեկնումէն ետք թերթը շարունակուած ըլլայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՅՆ

11 Յունուար 1947ին, եւ օգտագործելով երբեմնի կայծի տառատեսակները, Սան Փաւլոյի մէջ լոյս տեսած է «չէզոք» (ըստ էութեան՝ հնչական) թերթ մը՝ *Հայաստանի Զայն*, որուն արտօնատէրն էր Թակոբ Գայսերլեան, տնօրէնը՝ Պետրոս Նազարեան, իսկ խմբագիրը՝ Ե. Կարմրակ, մեծածաւալ, վեց էջով (չորս էջ հայերէն, երկու էջ՝ փորթուկալերէն)²³⁴:

Այս պարբերաթերթէն լոյս տեսած են 22 թիւեր²³⁵. ան դադարած է 1950ին²³⁶:

BRASIL-ARMENIA

Յունուար 1947ին, «Պրագիլ-Հայաստան» Մշակութային Ընկերութիւնը սկսած է հրատարակել *Brasil-Armenia* անունով փորթուկալերէն 32 էջոց ամսագիր մը (ըստ էութեան՝ դաշնակցական), Adil J. Duclosի տնօրէնութեամբ: Խմբագիրը՝ Գրիգոր Պոտազեանն էր, իսկ օգնական խմբագիրը՝ Անդրանիկ Պարոնեան²³⁷:

Այս թերթը ընդհատուած է - թէեւ մեզի յայտնի չէ ճշգրիտ թուականը - եւ վերսկսած է Մայիս-Յունիս 1957ին, նոյն էջաքանակով, բայց արդէն հայերէն-փորթուկալերէն բովանդակութեամբ: Թերթին հրատարակիչն էր Հայկական Մեղեդիներ Գեղարուեստական Ընկերութիւնը (*Sociedade Artistica Melodias Armenias*): Պա-

տասխանատու տնօրէն՝ Գրիգոր Պուտազեան: Խմբագրական կազմ՝ Գ. Պուտազեան, Յակոբ Պուրունսուզեան, Գրիգոր Քէօշկերեան, Արմենակ Չերքեզեան եւ Մարիճան Նիկողոսեան: Թերթը հրատարակուած կը նկատուի մինչեւ 1959²³⁸:

ԿԱՄՔ

Յունուար 1949ին, Պուենոս Այրէսի մէջ լոյս տեսած է երիտասարդական առաջին պարբերաթերթը՝ *Կամքը*, որ պաշտօնաթերթն էր Արմենիա Երիտասարդաց Միութեան կեդրոնական վարչութեան (այժմ՝ Հ. Յ. Դ. Արմենիա Երիտասարդական Միութիւն): Ան կը շարունակուի մինչեւ այսօր: Թերթը իր գոյութեան ընթացքին, բազմիցս փոխած է իր պարբերականութիւնն ու ձեւը, քանի մը առիթներով ենթարկուելով ընդհատումի: Միշտ եղած է երկլեզու (հայերէն-սպաներէն):

Թուագրումի մասին գոյութիւն ունին տարակարծութիւններ: Կիրակոսեան գրած է 1949-58²³⁹, Գասապեան՝ 1950-55...²⁴⁰, Բարլոյեան՝ 1948-58, 1972...²⁴¹, Տէր Խաչատուրեան՝ 1949-1958, 1958-64?, 1986 (մէկ թիւ), շրջան մը ներթերթային (*Արմենիայի մէջ*)²⁴²: Հասասեան վերականգնած է *Կամքի* հրատարակութեան տարբեր փուլերու ամենաճշգրիտ պատկերը²⁴³:-

Ա) Յունուար 1949-Դեկտեմբեր 1958, եղած է երկամսեայ, հանդէսի չափով:

Բ) Յունուար 1961-Դեկտեմբեր 1962, շարունակուած է որպէս երկամսեայ, տետրակի չափով:

Գ) 1963, հրատարակուած են երկու թիւեր, tabloid ծաւալով:

Դ) 1968-69, լոյս տեսած է իբրեւ առանձին էջ *Արմենիայի մէջ*:

Ե) 1972-75, վերադարձած է առաջին շրջանի ծաւալին, իբրեւ երկամսեայ:

Ե) 1984-1986, նոյն ծաւալով, բայց անկանոն պարբերականութեամբ:

Զ) 1986-1988, լոյս տեսած է իբրեւ ներդիր կամ առանձին էջ *Արմենիայի մէջ*:

Է) Յունիս-Յուլիս 1989, վերսկսած է հրատարակուիլ որպէս պարբերաթերթ, շատ անկանոն պարբերականութեամբ (վերջին տարիներուն՝ տարեկան մէկ-երկու թիւ):

Հետեւաբար, *Կամքի* բուն հրատարակութիւնը պէտք է թըլազրել 1949-58, 1961-63, 1972-75, 1984-86, 1989էն ցայսօր:

Մինչեւ 1963, *Կամքի* խմբագիրները եղած են Յովսէփ Օղուլեան եւ Ռուբէն Արծրունի (սպաներէն բաժին), Անդրանիկ Մու-

րատեան, Սոկրատ Թերզեան եւ Աշոտ Արծրունի (հայերէն բաժին)²⁴⁴։

Իր առաջին շրջանին (1949-1958), տպաքանակը 2000 էր²⁴⁵։ 1972-75ին լոյս տեսած է 3000 օրինակով²⁴⁶։ 1984էն ետք, 2000ի եւ 500ի միջեւ տպաքանակ ունեցած է։

EREVAN

Եղած է Արժանթինի Հանրապետութեան Հայ Երիտասարդական Դաշնակցութեան (յառաջդիմական) պաշտօնաթերթը։ Մկսած է լոյս տեսնել 1950ին, Պուենոս Այրէս, սպաներէն լեզուով։ 1953էն երկու սիւնակ հայերէն նիւթեր հրատարակած է²⁴⁷։ Ամսագիր էր՝ tabloid ծաւալով, բայց որոշ շրջաններու եղած է երկամսեայ կամ եռամսեայ²⁴⁸։ Խմբագիրն էր Պերճ Աճեմեան։

Հրատարակութեան թուականի մասին գոյութիւն ունին տարակարծութիւններ։ Պետրոսեան կու տայ 1948-55²⁴⁹, իսկ Բաբլոյեան՝ 1949-58²⁵⁰։ Հասսանեան սկզբնապէս թուագրած է 1949-58²⁵¹, ապա՝ 1950-58²⁵²։

Տպաքանակը 1000-1500 օրինակի միջեւ եղած է²⁵³։

EL LIBERTADOR (ԱԶԱՏԱՐԱՐԸ)

Այս թերթին գոյութիւնը պէտք է բացատրուի որպէս հետեւանք Խուան Տոմինկո Փերոնի կառավարութեան ժամանակ (1946-55) օտար համայնքները եւս քաղաքական գործունէութեան, աւելի ճիշդ՝ կառավարող փերոնական կուսակցութեան քարոզչութեան լծելու։ Իր բովանդակութեամբ, El Libertador ուղղուած էր արժանթինահայ գաղութին։ Անունը կ'ակնարկէ Արժանթինի, Չիլիի եւ Փերուի ազատարար (libertador) Խոսէ տէ Սան Մարթինի, որուն մահուան հարիւրամեակն էր 1950ին։

Արդարեւ, թերթին առաջին թիւը լոյս տեսած է 16 Հոկտեմբեր 1950ին։ Ռաֆֆի Միրաքեանի խմբագրութեամբ եւ չորս մեծածաւալ էջերով, ամբողջութեամբ սպաներէն, հրատարակութիւնը շարունակուած է մինչեւ Փերոնի անկումը՝ 1955ին։ Տպաքանակը եղած է 8000 օրինակ եւ, բացառիկ պարագայ, վաճառուած է թերթավաճառներու մօտ²⁵⁴։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հարաւային Ամերիկայի հայ մամուլի այս ուսումնասիրութիւնը փակելով, ստորեւ կու տանք 1910-50ականներուն լոյս տեսած պարբերականներու ամբողջական ցանկը, որ յետագայ ուսումնասիրութեան ու նաեւ ճշդումներու հիմք կրնայ հանդիսանայ։

ԹԵՐԹ	ԹՈՒԱԿԱՆ	ԼԵՂՈՒ
Armenia	1915(?)	Սպ.
Խորհրդային Հայաստան	1922-1923	Հայ.
Արժենթինեան Մամուլ	1923-1924	Հայ.
Նոր Երկիր	1924-1925(?)	Հայ.
Բողոքի Չայն	1924-1925	Հայ.
Կարմիր Աստղ	1924-1925(?)	Հայ.
Ծովք	1924(?)	Հայ.
Արժենթին	1927(?) - 1931	Հայ.-սպ.-թրք.
Եռանդ	1928-1931	Հայ.
La Revista Armenia	1929-1957, 1957-1971 1971-1975	Սպ.-հայ.
Արմենիա	1931-1988(չ.)	Հայ.-սպ.
Հայ Կեդրոն	1932-1970, 1997-1998	Հայ.-սպ.
Շիրակ	1933-1936	Հայ.
Կայծ	1933-1937	Հայ.-փորթ.
Նոր Հաճրն	1933-1998(չ.)	Հայ.-սպ.
Նոր Սերունդ	1934-1938, 1940-1942	Հայ.
Շարժում	1937-1991	Հայ.-սպ.
Մոնթեվիդեո	1937	Հայ.
Գայսերի	1937(?)	թրք.(?)
Արևելյան Աստղ	1939	Հայ.-թրք.
Կեանքի Ճամբան	1940ականներ	?
Վերելք	1937-1939	Հայ.
Տարեգիրք Հարաւային		
Ամերիկահայոց	1943	Հայ.
Արարատ	1943-1947	Հայ.-սպ.
Մասիս	1945-1946, 1953-1955	Հայ.
Հայ Մամուլ	1945-1950, 1955-59	Հայ.-սպ.
Թոյս	1944 կամ 1945	Հայ.
Ճշմարտութիւն	1946	Հայ.
Antorcha	1946	Սպ.
Nairi	1946-1947	Սպ.
Ararat	1946-1949(?)	Փորթ.
Հայաստանի Չայն	1947-1950	Հայ.-փորթ.
Brasil-Armenia	1947-1959(?)	Փորթ.
Կամք	1949-1998(ընդհատ., շար.)	Հայ.-սպ.
Erevan	1949-1958	Սպ.-հայ.
El Libertador	1950-1955	Սպ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Narciso Binayan, *La colectividad armenia en la Argentina*, Buenos Aires, 1974, էջ 101-108 (ՎՄամուլ գլուխը 4. Հասասանի գործն է); Carlos Hassassian, "Panorama de la prensa gráfica armenia en Argentina y Uruguay", in Vartan Matiossian (ed.), *Los armenios en America del Sur*, Buenos Aires, 1992, էջ 105-122 (զեկուցում՝ Հարաւային Ամերիկայի դաղութներու ուսումնասիրութեան Ա. գիտաժողովին, Հայագիտական Ուսմանց Հիմնարկ, Պուենոս Այրէսի, 1989); Նարսիսո Պինայեան Բարմոնա (Narciso Binayan Carmona, Entre el pasado y el futur]: los armenios en la Argentina, Buenos Aires, 1996, էջ 271-279) «Իմք ընդունած է երկրորդ ցուցակը եւ հեղինակի բանաւոր լրացումները: Որպէս նախահիմք սոյն ուսումնասիրութեան, տես 1910-1930ականներու Հարաւային Ամերիկայի հայ մամուլի մասին մեր յօդուածը (Vartan Matiossian, "La prensa armenia de Sudamerica (1910-1930)", *Sardarabad*, 19 de mayo de 1999, էջ 14-15):
- ² Արժեքիներէն Մամուլ, 23 Դեկտեմբեր 1923, էջ 1:
- ³ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պուենոս Այրէսի մասնաժողովի տոմար, 18 Փետրուար 1915:
- ⁴ Կ. Մ., «Ասատուր Զնտանճեան», *Արմենիա*, 24 Յունիս 1932, էջ 2: Տիգրանեան արարատու մամուլի երկու հայ խմբագիրներէն մէկն էր (միւսին անունը չէ տրուած) (Carlos Hassassian, "Hitos en las seis décadas de 'Armenia'", *Armenia*, 16 de noviembre de 1991, էջ 3):
- ⁵ «ՀԵԴ «Անդրանիկ» ակումբը՝ 70ամեայ երթը կը շարունակուի», *Արմենիա*, 13 Օգոստոս 1997, էջ 2. "La historia del Club Antranik", *Armenia*, 13 de agosto de 1997, էջ 8. Նման տուեալ անձանօթ է որեւէ այլ աղբիւրէ: Թիւրիմացութեան գոլութիւնը վերահաստատած է դաղութի աւագ սերունդի անդամներէն Աւագ Աւագեան (անձնական նամակ, Սեպտեմբեր 1997):
- ⁶ 26 Յուլիս 1915ին, ՀԲԸՄի Պուենոս Այրէսի վարչութիւնը նամակ լրած է Մենտոսալէն խաչատուր խաչատուրեանին, ի դիմաց 12 փետոյի նուիրատուութեան մը կցելով երեք ստացադիր, ինչ որ կ'ենթադրէ հոն ապրող երեք հայեր (տես՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պուենոս Այրէսի մասնաժողովի նամակներու տոմար, թիւ 124):
- ⁷ Ղուկաս Կարապետեան, «Մ. Պ. Սարգսեան», *Արմենիա*, 29 Ապրիլ 1954, էջ 3:
- ⁸ Hassassian, "Panorama...", էջ 102-103, որ կը լղուի Կարապետեանի յօդուածին (անունը գրուած է տարբեր ձեւով, իսկ թերթի ծաւալի մասին տեղեկութիւն չկայ): Տես նաեւ Hassassian, "Hitos...", էջ 3:
- ⁹ Hassassian, "Hitos...", էջ 3 (համտ.՝ Binayan Carmona, էջ 271-272):
- ¹⁰ Binayan, էջ 101; Hassassian, "Panorama...", էջ 104; Binayan Carmona, էջ 272; Ա. Պառապետեան, Մ. Միսիթարեան, Յ. Ֆելչեան, Մ. Բարբոյեան, Գ. Գուլումջեան, «Հայ պարբերական մամուլը», *Հայկական Մովստական Հանրագիտարան Մովստական Հայաստան*, Երեւան, 1987, էջ 459 (հարաւամերիկեան երկիրներու բաժինը հաւանաբար Բարբոյեանի գործն է):
- ¹¹ Արժեքիներէն Մամուլ, 7 Զոկտեմբեր 1923, էջ 1:

- ¹² Արժեքի հանձնարարական Մամուլ, 16 Դեկտեմբեր 1923, էջ 1.
- ¹³ Ա. Կիրակոսյան, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Երևան, 1970, էջ 303. Հմտ.՝ Յ. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիրտագրաբան, հ. 2, Երևան, 1956, էջ 381: Երկուքն ալ կը լինեն Նիւ Եորք տեղափոխումը, որ կ'ենթադրէ խմբագրի փոփոխություն, քանի որ Ա. Գրանեան Հիւսիսային Ամերիկա չէ եղած:
- ¹⁴ Մ. Սեֆերեան, «Մինչև հիմա լոյս տեսնող հնչակեան եւ համակիր թերթ եւ պարբերականներ», *Յիւնաստեանի երեսնամարդ Հայաստանի 1903-1953*, Պոստըն, 1953, էջ 163. Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան մամուլը (1887-1992)*, Պէյրուսթ, 1992, էջ 26:
- ¹⁵ Հմտ.՝ Մ. Շիրազեան, «Ինչպէս հիմնուեցաւ առաջին հայ թերթը Հարաւային Ամերիկայի մէջ», *Շարժում*, 16 Դեկտեմբեր 1961, էջ 4, ուր չէ լինուած *Նորհրդային Հայաստանի* նախնի թացը:
- ¹⁶ Գ. Լեւոնեան, *Հայ պարբերական մամուլը (1794-1934)*, Երևան, 1934, էջ 118:
- ¹⁷ Պետրոսեան, էջ 391. Հմտ.՝ Հ. Գանգրունի, «Մ. Դ. Հնչ. Կուսակցութեան մամուլը՝ 134 թերթ 41 երկիրներու մէջ», *Արարատ Գրական*, 8-9-10, 1960, էջ 397. Նոյն, *Յանուն Հայրենիքի*, Պէյրուսթ, 1990, էջ 190: Տես նաև Ս. Յ. Թերզեան, «Արմենիա»-ի երկուքը», *Արմենիա*, 27 Յուլիս 1942, էջ 5:
- ¹⁸ Կիրակոսյան, էջ 55. Մ. Բարբոյեան, *Հայ մամուլի համահաւաք ցուցակ*, Երևան, 1986, էջ 145. Հմտ.՝ Տէր Խաչատուրեան, էջ 20:
- ¹⁹ Գ. Լեւոնեան, էջ 118. Սեֆերեան, էջ 163: Ուրիշ թուագրումներ՝ 1921-1922 (Սարգիս Թոփչեան, «Ընկ. Յ. Թահմանեանի կեանքն ու գործունէութիւնը (Լ.)», *Արմենիա*, 1 Յուլիս 1934, էջ 2), 1920ականներու սկիզբներէն մինչև 1928ի վերջը (Asi nació Sharyum, *Շարժում*, 6 Յուլիս 1983, էջ 4. սպաներէն խմբագրական մըն է):
- ²⁰ Binayan, էջ 101. Հմտ.՝ Eva Tabakian, *Los armenios en la Argentina*, Buenos Aires, 1988, էջ 163; Nelida Boulgourdjian-Toufensian, *Los armenios en Buenos Aires: la reconstrucción de la identidad (1900-1950)*, Buenos Aires, 1997, էջ 154, որոնք կրկնած են - մերթ վրիպումներով - Հասանեանի 1974ի տուեանները (Պուրզուրեան երեւութապէս անտեսած է 1989ի ցանկը, բայց օգտագործած է զայն առանց լիջատակելու):
- ²¹ Hassassian, "Panorama...", էջ 104:
- ²² Hassassian, "Hitos...", էջ 3:
- ²³ Պիւնաստեանի (Binayan Carmona, էջ 272) 7 Դեկտեմբեր 1923-6 Ապրիլ 1924 թուագրումը հիմնուած է մեր բանաւոր հաղորդումին վրայ: Շիրազեան («Ինչպէս հիմնուեցաւ...», էջ 4) սխալմամբ գրած է, թէ առաջին թիւը լոյս տեսած էր 23 Դեկտեմբերին:
- ²⁴ Շիրազեան, «Ինչպէս հիմնուեցաւ...», էջ 4:
- ²⁵ Արժեքի հանձնարարական Մամուլ, 7 Դեկտեմբեր 1923, էջ 2: Նաև՝ շարքային Աւագ Կտիկեանի սենեակը (Շիրազեան, «Ինչպէս հիմնուեցաւ...», էջ 4), որ կը լինէ թէ գրաշարը Միհրան Դարբինեանն էր:
- ²⁶ Արժեքի հանձնարարական Մամուլ, 7 Դեկտեմբեր 1923, էջ 2:

- ²⁷ Շխրրոմեան, «Ինչպէս հիմուեցաւ...», էջ 4:
- ²⁸ Արժեքիմեան Մամուլ, 30 Դեկտեմբեր 1923, էջ 1:
- ²⁹ Պ. Մակինցեան, «Մի տարի Պորում», *Խորհրդային Հայաստան* օրաթերթ, 16 Մարտ 1924, էջ 2: «Մոշէն» սխալ ընթերցում մըն է, պէտք է ըլլաւ «Մ. Օշին» Համայնավար գործիչ Ս. Մնարեանին 504 տորարի առաքումին համար, տես՝ *Արժեքիմեան Մամուլ*, 9 Դեկտեմբեր 1923, էջ 1:
- ³⁰ Ստեփան Շխրրոմեան, «Ատաղձ՝ պատմութեան համար. Արժանիքի անդրանիկ հալ մամուլը», *Նոր Օր*, 18 Մարտ 1969, էջ 3:
- ³¹ Արժեքիմեան Մամուլ, 2 Դեկտեմբեր 1923, էջ 1:
- ³² Արժեքիմեան Մամուլ, 30 Մարտ 1924, էջ 2:
- ³³ Արժեքիմեան Մամուլ, 6 Ապրիլ 1924, էջ 1: Հետեւաբար սխալ է «խմբագրական կազմ (Միհրան Ուզունեան-Մ. Օշին)» վերագրումը այս թերթին համար (Բարբառյան, էջ 145):
- ³⁴ Շխրրոմեան, «Ատաղձ...», էջ 3:
- ³⁵ Hassassian, «Panorama...», էջ 104:
- ³⁶ Շխրրոմեան, «Ատաղձ...», էջ 3:
- ³⁷ Լեւոնեան, էջ 121:
- ³⁸ Պետրոսեան, էջ 379 (ռուսերէն ամփոփումին մէջ կը գրէ 1922-1924). *Կիրակոսեան*, էջ 144. *Բարբառյան*, էջ 148. *Խաչատրեան*, *Մխիթարեան* եւ այլք, էջ 459: *Փանգրունի* («Մ. Դ. Հնչ. Կուսակցութեան...», էջ 398. *Յանուս...*, էջ 190), կը կրկնէ Պետրոսեանը:
- ³⁹ Լեւոնեան կ'ըսէ, թէ Քիւթնեան «գործակից» էր (Լեւոնեան, էջ 121. «Հմտ. Hassassian, «Panorama...», էջ 104). միւս բոլոր աղբիւրները՝ Պետրոսեան, Կիրակոսեան, Բարբառյան եւ Սեֆերեան (passim) զայն կը համարեն Օշինի յաջորդը: Տէր Խաչատրեան (էջ 32) Օշինը պատասխանատու խմբագիր կը նկատէ, իսկ Քիւթնեանը՝ խմբագիր:
- ⁴⁰ Ա. Ջիւրեան, «Պ. Ալրէսի կոմբոզիչը», *Բանփոր-Պարից*, 1 Նոյեմբեր 1924, էջ 3:
- ⁴¹ Hassassian, «Panorama...», էջ 104. «Հմտ.» Binayan Carmona, էջ 274:
- ⁴² Սեֆերեան, էջ 163. «Հմտ.» Տէր Խաչատրեան, էջ 32:
- ⁴³ Ս. Ֆիրունց, «Դանակցութիւնը Հարաւ. Ամերիկայի մէջ», *Արմենիա*, 18 Հոկտեմբեր 1938, էջ 2: 1920ականներուն, կուսակցական ակումբին մէջ եղած է պատի թերթ մը (Մմբատ Թորգոմեան, *Արմենակ Մաղաքեանի լիշատակին*), *Արմենիա*, 24 Սեպտեմբեր 1964, էջ 2):
- ⁴⁴ Ս. Յ. Թէրզեան, «Մարմենիա»ի երկունքը», *Արմենիա*, 27 Յուլիս 1942, էջ 5: Այլ վկայութիւններ կ'ըսեն 1923, (Ս. Բ. [Մահակ Բարսեղեան], «Հազարերորդ թիւը», *Արմենիա*, 27 Յուլիս 1942, էջ 3), ինչ որ նուազ հաւանական կ'երեւի:
- ⁴⁵ Ս. Յ. Թ. [Սոկրատ Յ. Թերզեան], «Մարմենիա»ի...», *Արմենիա*, 28 Ապրիլ 1951, էջ 8. Ս. Բարսեղեան, «Շարափաթերթէ օրաթերթ», *Արմենիա*, 11 Սեպտեմբեր 1954, էջ 2: Տես նաեւ աւագ սերունդի անդամ Յովհ. Մանուկեանի վկայութիւնը (Carlos Hassassian, «Juan Manukian, todo un ejemplo», *Armenia*, 31 de agosto de 1988, էջ 5) Հասասեան սկիզբը Վիեննայի լիշատակած էր (Binayan, էջ 101) եւ այժմ ընդունած է վենետիկը, թէեւ կը շարունակէ պնդել, թէ 30-40 քիլո տառ ա-

- պապրուած էր (Hassassian, "Panorama...", էջ 105): Գիրքը Երուսաղէմէն բեր-
 ւած ըլլալը (Լեւոն Լեւոնեան, «Արմենիա» Հար. Ամերիկայի մէջ», 5-6 Մայիս
 1961, էջ 3) անհիմն է:
- ⁴⁶ Binayan, էջ 101. Հմտ.՝ «Ընկեր մը, Սերոբ Մոզեան», *Արմենիա*, 16 Հոկտեմբեր
 1975, էջ 5:
- ⁴⁷ Թերզեան, «Արմենիա» ի...», էջ 5:
- ⁴⁸ Ս. Ֆիրունց, «Արմենիա» ի քսանամեակը», *Արմենիա*, 28 Ապրիլ 1951, էջ 9:
- ⁴⁹ Ս. Թորգոմեան, «Նշան Ֆեներեան (իր մահուան քսանամեակին առթիւ)», *Արմենիա*,
 13 Հոկտեմբեր 1954, էջ 2:
- ⁵⁰ Միհրան Մինասեան, «Հայ պարբերական մամուլի նորայարտ անուններ», *Հայկազ-
 եան Հայագիտական Հանդէս*, հատոր Թ., 1981, էջ 304:
- ⁵¹ Աշոտ Արծրունի, *Տարեցոյց Հարաւ. Ամերիկահայոց Պոնտոս Այրէս*, 1943, էջ 226.
 Հմտ.՝ Binayan, էջ 101; Tabakian, էջ 163. Բարբոյեան, էջ 159. Hassassian,
 "Panorama...", էջ 104: Հասսանեան աւելի ուշ գրած է «մինչեւ 1925» (Hassassian,
 "Hitos...", էջ 3). Պինայեանի 1924-1925 թուադրումը (Binayan Carmona, էջ 272)
 արդիւնք է մեր բանաւոր հաղորդումին: Ոչ մէկը կը ճշդէ պարբերականութիւնը:
 Պուրղուրեանի 1925-1931 թուադրումը (Nelida Boulgourdjian, "Los armenios en
 Buenos Aires. Primera oleada migratoria (1909-1930)", *Todo es Historia*, agosto de
 1992, էջ 82. Հմտ. Boulgourdjian-Toufeksian, էջ 154) Հասսանեանի 1974ի տուեալի
 սխալ ընթերցումէն քաղուած անհիմն եզրակացում մըն է:
- ⁵² «Ընկեր մը», էջ 5. Հասսանեան կու տայ Pavon 40 հասցէն, վկայակոչելով Արծրունին
 (Hassassian, "Panorama...", էջ 104), որ սակայն այդպիսի տեղեկութիւն չունի:
- ⁵³ Թերզեան, էջ 5: Թերթին օժանդակած են Օննիկ Օհանէսեան, Մկրտիչ Օտապաշ-
 եան, Նշան Ֆեներեան եւ Սերոբ Մոզեան («Ընկեր մը», էջ 5): Մահադրութիւնը
 չի լիչեր Արամ Տումանեանի անունը: Արծրունի (էջ 226) հրատարակած է այս
 չորս օժանդակներու եւ Օ. Տարազեանի լուսանկարը Թերթի խմբագրատան մէջ:
- ⁵⁴ Թերզեան, էջ 5: 11 Մարտ 1923 թուադրումը (Թոփչեան, էջ 2) Թերեւս գրաշար-
 կան վրիպակ մըն է:
- ⁵⁵ Ֆիրունց, «Արմենիա» ի...», էջ 9. Հմտ.՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Հ.Թ. Դաշ-
 նակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990)*, Պէլլուսթ, 1990, էջ 52:
- ⁵⁶ Զիլեան, էջ 3:
- ⁵⁷ Արծանթիւնի հայ գաղութը, *Բանկոր-Պարիզ*, 1 Փետրուար 1925, էջ 3:
- ⁵⁸ Վարդան Մատթէոսեան, «Նորայարտ տպագիրներ ու անտիպներ Հարաւային Ամե-
 րիկայի մէջ», *Ժառաջ*, 29 Նոյեմբեր 1995, էջ 2:
- ⁵⁹ Գէորգ Ա. Սարաֆեան, *Պատմութիւն Ամիսթայի Հայոց*, Բ. հատոր, Լոս Անճելէս,
 1953, էջ 569:
- ⁶⁰ Binayan, էջ 108. Հմտ.՝ Binayan Carmona, էջ 277:
- ⁶¹ Լեւոնեան, էջ 147. Պետրոսեան, էջ 437:
- ⁶² Կիրակոսեան, էջ 55. Բարբոյեան, էջ 178. Հմտ.՝ Խառատեան, Մխիթարեան եւ
 այլք, էջ 459:
- ⁶³ Արծրունի, էջ 226:

- ⁶⁴ Binayan, էջ 101. Հմմտ.՝ Tabakian, էջ 163: Հիմնուելով Հասասեանի վրայ, ատենին տուած էինք 1924-1931 տարեթիւերը՝ առանց Արժենթինի հաւաքածոն տեսած ըլլալու (տես Քղթակից, «Ուրուկուէյ. առաջին հայ պարբերականը», Թառաջ, 30 Մարտ 1988, էջ 3):
- ⁶⁵ Hassassian, "Panorama...", էջ 104, որ օգտագործած է թերթի գրաչար Անդրէաս Գարամանեանի հալթայթած որոշ տուեալներ:
- ⁶⁶ Binayan Carmona, էջ 272:
- ⁶⁷ «Հարաւ Ամերիկայի հայերը (չըջուն քարոզիչի մը վաւերական տեղեկութիւնները)», Թառաջ, 11 Յուլիս 1930, էջ 2:
- ⁶⁸ Թոփչեան, էջ 2:
- ⁶⁹ Hassassian, "Panorama...", էջ 104:
- ⁷⁰ Հմմտ.՝ Արժենթին, 20 Օգոստոս 1928, էջ 2. Արժենթին, 19 Փետրուար 1929, էջ 3:
- ⁷¹ Արծրունի, էջ 227:
- ⁷² Արդարեւ, սիւալ է Հասասեանի առաջին հաւաստիացումը, թէ «գրեթէ ամբողջովին հայերէնով» լոյս տեսած է (Binayan, էջ 105):
- ⁷³ Ներսէս Գասապեան («Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիա, 3 հատորով, կազմեց Յովհ. Պետրոսեան», Պատմա-բանասիրական Հանդէս, No 3-4, 1961, էջ 328) գրած է, թէ *La Revista Armenia* սկսած է լոյս տեսնել 1930ին, եւ թէ 1961ին շարունակելի էր՝ Իր կարգին, Բաբլոյեան (էջ 464) կը թուադրէ «1929-1974 (չար.)»:
- ⁷⁴ Binayan, էջ 105 (հմմտ. Binayan Carmona, էջ 276). Պուլգուրճեան միայն կը լինէ 1929-1957 շրջանը (Boulgourdjian-Toufeksian, էջ 154):
- ⁷⁵ Հմմտ.՝ *La Revista Armenia*, 10 de noviembre de 1929, էջ 13:
- ⁷⁶ Խառատեան, Մխիթարեան եւ այլք, էջ 459:
- ⁷⁷ Տիգրան Աւագեան, «Պրագիլահայ գաղութը (Ե.)», *Արժենթին*, 13 Ապրիլ 1954, էջ 2:
- ⁷⁸ Գիւտ Մխիթարեան, *Պրագիլահայ գաղութը*, Փարիզ, 1938, էջ 32:
- ⁷⁹ Եզնիկ քհնյ. Վարդանեան, *Պրագիլոյ հայ գաղութը*, Պուենոս Այրէս, 1948, էջ 194-197:
- ⁸⁰ Թուշապատում Հ. Բ. Դաշնակցութեան, 1890-1950, Պոստրն, 1950, էջ 574. Դ. Փափագեան, «Հ. Բ. Դաշնակցութեան վաթսուներեակ մամուլը», *Թուսաբեր*, 18 Դեկտեմբեր 1954, էջ 55 (արտատպում՝ 1950ին լոյս տեսած ցանկի մը):
- ⁸¹ Տէր Խաչատուրեան, *Հայ Թեղափոխական...*, էջ 53: Եռանդը անկախ էր ու միութեան մէջ հնչակեանները «գրեթէ մեծամասնութիւն» (Վարդանեան, էջ 197) կազմած են հետեւելով Տէր Խաչատուրեանին, որ երկու դաշնակցականէ ու մէկ հրնչակեանէ խմբագրուած *Սուրիահայ տարեգիրքը* կը սեպէ աւելի յարմար՝ դաշնակցական եւ ոչ թէ հնչակեան մամուլ դաստելու (*Սոցիալ Դեմոկրատ...*, էջ 42), Եռանդը կարելի էր նորնայէ հնչակեան մամուլի շարքին դասել:
- ⁸² Վարդանեան, էջ 197:
- ⁸³ Տէր Խաչատուրեան, *Հայ Թեղափոխական...*, էջ 53:
- ⁸⁴ Վարդանեան, էջ 247:
- ⁸⁵ Դեկտեմբեր 1998ին, համայնավար մամուլը վերածնաւ. *Նոր Սեւան* պարբերաթիւթով:

- ⁸⁶ Ռէնի նամակները, Հայրենիք ամսագիր, Օգոստոս 1963, էջ 22:
- ⁸⁷ Ըստ կենսագրական տեղեկութիւններու, ան անցած է Պուքրէշ, ուր ստանձնած է Հայաստան թերթի խմբագրութիւնը, ապա պաշտօնավարած է տեղական դարոցին մէջ: Այնուհետեւ մեկնած է Համատան Պարսկաստան, ուր մեռած է 1944ին (Վուչիթ Թամրազեան [Թանաստու]), Լոյս, 8-9, 1944, էջ 71-72):
- ⁸⁸ Թերզեան, Արմենիա...», էջ 8: Ըստ Լեւոն Լեւոնեանի («Արմենիա» Հար. Ամերիկայի...», էջ 3), Թ. Մեծատուրեան «ճանրաբեռնուած էր հանրային ուրիշ աշխատանքներով»:
- ⁸⁹ Վարդան Մատթէոսեան, Վերաբարտ...», Յառաջ, 28 Նոյեմբեր 1995, էջ 2:
- ⁹⁰ Ս. Բ., «Հազարերորդ...», էջ 3. տես նաեւ Ֆիրունց, «Արմենիա» ի...», էջ 7:
- ⁹¹ Hassassian, «Panorama...», էջ 104:
- ⁹² Թուշապատու...», էջ 569 (ճմտ.՝ Տէր Խաչատուրեան, Հ. Թ. Դաշնակցութեան...», էջ 50): Բարսեղեան կը լիշէ Ա. Երկանեանի, Ե. Թաւթանեանի, Ա. Մաղաքեանի եւ Ս. Թոփչեանի անունները (Ս. Բ., «Հազարերորդ...», էջ 3):
- ⁹³ Ֆիրունց, «Արմենիա» ի...», էջ 7:
- ⁹⁴ Թերզեան, «Արմենիա» ի...», էջ 5:
- ⁹⁵ Hassassian, «Panorama...», էջ 104:
- ⁹⁶ Բարսեղեան, Շարաթաթերթէ...», էջ 2: ձշղենք, որ արդէն Արժենթիեան Մամուլ Նոր Երկիր եւ Արժենթիե տպագիր թերթեր եղած էին: Գործարանին տէրը Յարութիւն Թաւթանեան էր:
- ⁹⁷ Ս. Բ., «Արմենիա» ի առաջին խմբագիրը», 20 Մարտ 1942, էջ 2:
- ⁹⁸ Ֆիրունց, «Արմենիա» ի...», էջ 7:
- ⁹⁹ Հասասեան (Hassassian, «Panorama...», էջ 104) կը գրէ 1934: Բարբոյանի (էջ 187) ցանկը (Ս. Թոփչեան, Ա. Միքայէլեան, Ա. Արծրունի, Ե. Տեւեճեան, Ռէն Վարդանեան, Վ. Գէորգեան, Պ. Հաճեան) հերթականութեան կարեւոր սխալներ ունի:
- ¹⁰⁰ Լեւոնեան (էջ 164) թուագրած է 1931-1934, քանի որ իր ցուցակի հրատարակութեան թուականն էր: Պետրոսեան (էջ 448) նոյնութեամբ իւրացուցած է: Իսկ Կիրակոսեան (էջ 56) 1970ին զայն «շարաթաթերթ» նկատած է:
- ¹⁰¹ Հմտ.՝ Լ. Լեւոնեան, «Արմենիա» Հար. Ամերիկայի...», էջ 3: Կ'արժէ մէջբերել Վ. Գէորգեանի մեքենագիր վկայութիւնը, որ կցուած է 1940-41 թուականներու իր անձնական հաւաքածոյի առաջին էջին: «669 թիւէն սկսած (16 փետրուար 1940 - Վ. Մ.) Ռէն Վարդանեանի հրատարակչութեան պատճառով խմբագրականները գրած եմ եւ, ի բաց առեալ 677, 678 եւ 699 թիւերու խմբագրականները» (Ընդգծումը մերն է - Վ. Մ.): Վ. Գէորգեանի Արմենիայի 1938-1966ի հաւաքածոն կը ներառէ իր աշխատակցած համարները եւ այժմ կը պահուի Պուենտո Այրէսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութեան գրադարանը:
- ¹⁰² Ուտտի, սխալ է հետեւեալ հաստատումը: «1930ին Արմենիա թերթէն կը նշանակուի առաջին խմբագիր. տարի մը դադարէ վերջ նորէն պաշտօնի կը կոչուի Արմենիա թերթի խմբագրութեան» (Մարաֆեան, էջ 784):
- ¹⁰³ Hassassian, «Panorama...», էջ 105. Լ. Լեւոնեան («Արմենիա»...», էջ 3) գրած է 1958:

- ¹⁰⁴ Լորս տեսած է հայերէն եւ սպաներէն մէկական թիւ. այս իմաստով, փաստօրէն շաբաթաթերթ էր: Սխալ է Պուլգուրճեանի 1991 թուագրումը (Boulgourdjian-Toufeksian, էջ 158) :
- ¹⁰⁵ 1980-81ին, կարճ շրջանով, Պ. Հաճեան եղած է խմբագրապետ, իսկ Սեդօ Պոլաճեան՝ խմբագիր: Հասասեան ստիկա հիմք համարած է Հաճեանի պաշտօնավարութիւնը երկու շրջանի բաժնեկու՝ 1971-1980 եւ 1981-1986, ինչ որ մեր կարծիքով ճիշդ չէ (“Hitos...”, էջ 7. հոս ճշգրտած է Պոլաճեանի խմբագրութեան նախորդ՝ 1979 թուագրումը. հմտ.՝ “Panorama...”, էջ 105):
- ¹⁰⁶ Բարբոյեան (464) կը լիչէ “Armenia” անունով իբրեւ թէ 1934ին հիմնուած սպանագիր թերթ մը (հրատարակիչ՝ Արմենիա Մշակութային Ընկերակցութիւն, խմբագիր՝ Վարդան Գէորգեան): Սակայն, ա) 1934ին այդ անունով սպանագիր թերթ չէ եղած, բ) Արմենիա Մշակութային Ընկերակցութիւնը (Հ. Թ. Դաշնակցութեան պաշտօնական անունը) հիմնուած է 1951ին, գ) Վ. Գէորգեան Արժանթին ժամանած է 1938ին, դ) Սպաներէն Արմենիայի խմբագիր չէ եղած երբեք: Տէր Խաչատուրեան (Հ. Թ. Դաշնակցութեան..., էջ 75) որպէս առանձին շաբաթաթերթ կը լիչէ սպաներէն Արմենիան («1967?» թուագրումով), բայց ստիկա սխալ է:
- ¹⁰⁷ Binayan, էջ 102. Թապագեան (Tabakian, էջ 164) անճիշդ ընթերցումով կը համարէ, թէ սպաներէն լաւելուածը ունեցած է 5000 տպաքանակ:
- ¹⁰⁸ Հմտ.՝ Բարբոյեան, էջ 197. Լեւոնեան (էջ 168) 1933 թուականը ունի. հմտ.՝ Պետրոսեան (էջ 462): Հասասեան սկիզբը գրած է Հոկտեմբեր 1932-1970ի վերջերը (Binayan, էջ 105), ապա՝ Նոյեմբեր 1932-1969 (Hassassian, “Panorama...”, էջ 107. հմտ. Binayan Carmona, էջ 275):
- ¹⁰⁹ Գարեգին արք. Խաչատուրեանի խմբագրութեան շրջանին (Մայիս 1938-Մարտ 1940), Հայ Կեդրոն Թունուար 1939ին յայտարարած է ընդ շրջան», սկսելով իր համարակալումը Ա. տարի եւ Ա. թիւէն, թէեւ հրատարակութիւնը չէր դադարած: Ապրիլ 1940ին վերադարձած է հին համարակալումին: Նախորդ հրատարակումի մը մէջ (Վարդան Մատթէոսեան, Պուենոս Այրէսի Արարատ ամսագիրը», Բանբեր Երեւանի Համալսարանի, 2, 1992, էջ 189), Գարեգին արք.ի խմբագրութեան շրջանը համարած է ինք Թունուար 1939-Մարտ 1940:
- ¹¹⁰ 1955ին հրատարակուած կենսագրական մը («ՄՊ է Թարութիւն վրդ. Մուշեան», Թառաջապահ, Թունիս 1955, էջ 6), կը լիչէ, թէ Մուշեան վրդ. «մէկուկէս տարի(է ի վեր) Հայ Կեդրոն ամսագրի խմբագրութիւնը» կը վարէր: 1952 (Արսլանի մահուան թուականը)–1954 բացը. ենթադրաբար. կրնայ լեցուցած ըլլալ նոր առաջնորդը՝ Սիոն արք. Մանուկեան: Թարութիւն Մ. վրդ. Մուշեան 1953-1956ին հրատարակած է Հայ Կեդրոն Տարեցոյցը, որ կապ չունի համանուն ամսաթերթին հետ: 1953-1973... թուագրումը տարեցոյցին համար (Բարբոյեան, էջ 259) բոլորովին սխալ է:
- ¹¹¹ Նախնական ցանկագրումը տես Վարդան Մատթէոսեան, «Հայց. Եկեղեցիի ծագումն ու զարգացումը Պուենոս Այրէսի մէջ (1912-1938)», Հասկ Հայագիտական Տարեգիրք, հտ. Է-Ը, 1995-1996, էջ 103 (հոս սխալմամբ նշած ենք Նոյեմբեր 1932 իբրեւ թերթի հիմնադրութեան թուական): Կիրակոսեան (էջ 330) կը գրէ

- «ընդհ. վ. տնօրէն՝ թ. Մեծատուրեան, Բաբկէն Ավաղեան(sic)», իսկ Բաբրոյեան (էջ 197)՝ «վարիչ տնօր.՝ թ. Մեծատուրեան, լիտագայում վարիչ տնօր. եւ խմբ.՝ Վարդան (sic) Մուշեան, ապա Բաբկէն արք. Ազատեան»: Ըստ Հասասեանի, թերթին խմբագրութիւնը «Համայնքի եկեղեցական բարձրագոյն իշխանաւորին ձեռքն էր» (Binayan, էջ 105. «ՃՃՄ. Hassassian, "Panorama..."», էջ 107; Binayan Carmona, էջ 275): Ըստ ձեւի ճիշդ ըլլալով հանդերձ - ամսաթերթը Եկեղեցւոյ վարչութեան կը պատկանէր - ըստ հոթեան հաստատումը ճիշդ չէ. խմբագիրներէն միայն երկուքը թեմի առաջնորդ եղած են:
- ¹¹² Պ. Արշակ Զօպանեանի Գրական Յիմնամաս, Յոբելիական Հանդէսի եւ նուիրատուութեանց հաշիւը Պ. Այրէս, 30 Յուլիս 1939», *Հայ Կեդրոն*, Հոկտեմբեր 1939, էջ 15:
- ¹¹³ Գարեգին արք., «Մեր սիրելի ժողովուրդին», *Հայ Կեդրոն*, Դեկտեմբեր 1939, էջ 6:
- ¹¹⁴ Binayan, էջ 105 (1200 օրինակ), Hassassian, "Panorama...", էջ 107 (1300 օրինակ):
- ¹¹⁵ Նոր Հաճըն պատմագիրք, Պոնեսու Այրէս, 1973, էջ 143:
- ¹¹⁶ Նոր, էջ 124-127:
- ¹¹⁷ Պետրոսեան, էջ 475. Կիրակոսեան, էջ 404:
- ¹¹⁸ Բաբրոյեան, էջ 230: Աւելի ուշ, ընդունած է 1935 թուականը, հաւանաբար քաղելով Կիրակոսեանէն («ՃՃՄ. Խառատեան, Մխիթարեան եւ ասլթ», էջ 459):
- ¹¹⁹ Արծրունի, էջ 227:
- ¹²⁰ Binayan, էջ 106:
- ¹²¹ Hassassian, "Panorama...", էջ 107:
- ¹²² Carlos Hassassian, "Nor Hadjin", una de las pioneras", *Armenia*, 29 de diciembre de 1993, էջ 8. «ՃՃՄ.՝ Binayan Carmona, էջ 277:
- ¹²³ Նոր Հաճըն..., էջ 190-191:
- ¹²⁴ Տես Յ. Պ. Պողոսեան, *Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօգան Տաղի հայ գիւղերը*, Լոս Անճելիս, 1942, էջ 799:
- ¹²⁵ Hassassian, "Nor Hadjin"..., էջ 8:
- ¹²⁶ Կիրակոսեան, էջ 405, որ կ'անգիտանայ 1940ը կանխող տպարանները:
- ¹²⁷ Նոր Հաճըն..., էջ 47. Յ. Պողոսեան, էջ 800: Ա. Պապահեքեան եղած է վարիչ տնօրէն մինչեւ 1969, ապա շարունակած է որպէս արտօնատէր Այնուհետեւ արտօնատէրեր եղած են Մարթին Քեչիչեան եւ Կարապետ Թուրարգիսեան:
- ¹²⁸ Մինչեւ 1973, տես՝ Նոր Հաճըն..., էջ 190: Մինչեւ 1993, տես՝ Hassassian, "Nor Hadjin'...", էջ 8. Կիրակոսեան միայն կը լինէ Ա. Գրաճեանը եւ Վ. Խօլլէզլիս (էջ 405), իսկ Բաբրոյեան (էջ 230)՝ Վա. Էմէնէկեան, Ար. Գրաճեան, Նազ. Կուժունի, Յարութիւն Ե. Վ. Մուշեան»:
- ¹²⁹ Նոր Հաճըն..., էջ 190: Հետեւաբար, սխալ է այն պնդումը, թէ «Հաճըն թերթը կը փոխադրուի Հարաւային Ամերիկա եւ կը լանձուռի ընկ. Խօլլեանքեանին եւ Պաղչեճեանին» (Ա. Կիտուր, խմբ., *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան (1887-1963)*, Բ. հատոր, Պէլրութ, 1963, էջ 244):
- ¹³⁰ Լեւոնեան, էջ 146:
- ¹³¹ Պետրոսեան, էջ 436, 465:

- ¹³² Կիրակոսեան, էջ 153: Մատենադարանի գիտաշխատող Գէորգ Տէր-Վարդանեանի համաձայն, հոն Շիրակի հաւաքածոյ չկայ (անձնական իմաց -e-mail-, 14 Ապրիլ 1999):
- ¹³³ Բաբրոյան, էջ 180:
- ¹³⁴ Արծրունի, էջ 227:
- ¹³⁵ Ռ. Գրիգորեան, «Հայաստանի Օդնութեան Կոմիտէ», Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, էջ 153:
- ¹³⁶ Binayan, էջ 102. Թապագեան (Tabakian, էջ 164), հետեւելով հանդերձ Հասասեանի, կը գրէ 1930 որպէս Շիրակի հիմնադրութեան թուական (առանց թուագրելու վախճանը), զոր գրաչարական վրիպակի պէտք է վերագրել:
- ¹³⁷ Hassassian, "Panorama...", էջ 104:
- ¹³⁸ Binayan Carmona, էջ 275:
- ¹³⁹ «Շիրակ», Շիրակ, 29 Նոյեմբեր 1933, էջ 2:
- ¹⁴⁰ Շիրակ, 1 Դեկտեմբեր 1934:
- ¹⁴¹ Բանթլիթակից, «Շիրակի Բարեկամներու Ա. Գոնֆէրանը», Շիրակ, 15 Սեպտեմբեր 1934, էջ 1: Բաբրոյան «Շիրակ» Բարեգործական Միութիւն կը գրէ (Պառատեան, Մխիթարեան եւ այլք, էջ 459), ինչ որ յայտնապէս սխալ է:
- ¹⁴² Պետրոսեան, էջ 465. Բաբրոյան, էջ 180:
- ¹⁴³ Բաբրոյան, էջ 180:
- ¹⁴⁴ Արծրունի, էջ 227. Binayan, էջ 105; Hassassian, "Panorama...", էջ 107 (հմտ. Binayan Carmona, էջ 275):
- ¹⁴⁵ ՀՕԿի Կեդր. Դիւանէն, Շիրակ, 29 Նոյեմբեր 1933, էջ 2:
- ¹⁴⁶ Արծրունի, էջ 227:
- ¹⁴⁷ Binayan, էջ 105. հմտ. Tabakian, էջ 164:
- ¹⁴⁸ Hassassian, "Panorama...", էջ 107; Binayan Carmona, էջ 275:
- ¹⁴⁹ Բաբրոյան, էջ 220 (1935-1942, ըստ երկրի ցանկին մէջ):
- ¹⁵⁰ Hassassian, "Panorama...", էջ 107 (հմտ. Binayan Carmona, էջ 275). Բաբրոյան, էջ 220:
- ¹⁵¹ Կիտուր, էջ 222-226:
- ¹⁵² Վարդանեան, էջ 247: Կիտուր (էջ 226) կը գրէ, թէ թերթը հիմնուած է Նոյեմբեր 1931ին, իսկ առաջին թիւը լոյս տեսած է Դեկտեմբերին: 1931 թուականը տպագրական վրիպակ մը կ'երեւի, քանի որ կը գրէ, թէ «օրինական հանդամանքը ստանալէ ետք(...) հիմնեց "Կայծ" օրգանը (խմորատիպ ամսագիր)»: Իսկ Դեկտեմբեր 1932ին առաջին թիւին լոյս ընծայումը կը հակասէ բոլոր աղբիւրներուն, որոնք կը պնդեն, որ այս թերթը սկսած է 1933ին (հմտ. Կիրակոսեան, էջ 309): Տէր Պաշատուրեան (էջ 27) նաեւ իր կատարածները յայտնած է Կիտուրի պնդումին վրայ, առանց նշմարելու մեր ցուցադրած հակասութիւնը: Ջեռքի տակ ունեցած է Յունիս 1933ի թիւը (Ա. տարուան վեցերորդը), ինչ որ կը հաստատէ, թէ սկսած է լոյս տեսնել Յունուարին:
- ¹⁵³ Կիտուր, էջ 226:
- ¹⁵⁴ Անդ. տես նաեւ Վարդանեան, էջ 250: Յիշեալ Պատգամաւորական ժողովին 1935 թուագրումը (Asi nació..., էջ 4) սխալ է Նոյն աղբիւրը Յակոբ Մարկոսեանի եւ

- Ե. Կարմրակի կը վերագրէ հիմնական ջանքերը՝ տպագրեալ Կարծը իրականաց-
 նելու: Գանգրունիի նշումը, թէ Կարծի տպագիր առաջին թիւը Օգոստոս 1931ին
 լոյս տեսած է (Յանուն..., էջ 127), թիւը լիմացութիւն մըն է, թէեւ այլուր թերթին
 ճիշդ թուագրումը տուած է (նոյն տեղը, էջ 188):
- ¹⁵⁵ Վարդանեան, էջ 250: Սեֆերեան (167) եւ այլք Ե. Կարմրակը կը նշեն որպէս
 խմբագիր 1933-37ի համար, առանց զատորոշելու խմբրատիպ եւ տպագիր շՐԴ-
 ջաններուն միջեւ:
- ¹⁵⁶ «Յետադարձ ակնարկ մը», Հայ Կեդրոն, Նոյեմբեր 1934, էջ 5: Նախապէս տուած
 էինք 1935ը որպէս հիմնադրութեան եւ 1937ը որպէս առաջին դադարի տարի-
 ներ (Մատթէոսեան, «Հայց. Եկեղեցիի...», էջ 105):
- ¹⁵⁷ Կիրակոսեան, էջ 408-409:
- ¹⁵⁸ Գասապեան, էջ 325:
- ¹⁵⁹ Բարբոյեան, էջ 210:
- ¹⁶⁰ Binayan, էջ 107:
- ¹⁶¹ Hassassian, "Panorama...", էջ 108 (հմտ.՝ Binayan Carmona, էջ 276;
 Boulgourdjian-Toufeksian, էջ 155, որ կ'օգտուի այս լռուածէն՝ առանց
 լիշատակելու...):
- ¹⁶² «Եւր Սերունդ» (Խմբ.), Արմենիա, 2 Օգոստոս 1940, էջ 1:
- ¹⁶³ Binayan, էջ 108: Բարբոյեան (էջ 254) կը լինէ այս պարբերաթերթը որպէս ար-
 ժանթինահայ մամուլ, որովհետեւ տպուած է Պուենոս Այրէսի մէջ:
- ¹⁶⁴ Hassassian, "Panorama...", էջ 112. հմտ.՝ Binayan Carmona, էջ 278:
- ¹⁶⁵ Daniel Karamanukian y Alberto Douredjian, *La inmigracion armenia en el Uruguay*,
 tomo I, Montevideo, 1993, էջ 132:
- ¹⁶⁶ Hassassian, "Panorama...", էջ 112:
- ¹⁶⁷ Karamanukian y Douredjian, էջ 136:
- ¹⁶⁸ Թղթակից, «Ուրուկուէյ. առաջին հայ...», էջ 3:
- ¹⁶⁹ Նոյն
- ¹⁷⁰ Հմտ.՝ Hassassian, "Panorama...", էջ 112, որ չի նշեր Արմենիան Աստղի լեզուն
 Պինայեան (Binayan Carmona, էջ 278) Արմենիան Աստղը սխալմամբ կը թուագրէ
 1938:
- ¹⁷¹ Կիտուր, էջ 234:
- ¹⁷² Asi nació..., էջ 4:
- ¹⁷³ Կիտուր, էջ 234. Asi nació..., էջ 4. Hassassian, "Panorama...", էջ 107 (հմտ.՝
 Binayan Carmona, էջ 276):
- ¹⁷⁴ Հասասեան (Binayan, էջ 103; Hassassian, "Panorama...", էջ 107; Binayan Carmona,
 էջ 276) կ'ըսէ, թէ թերթը սկսած է 20 Յունիսին, իսկ Շարժումի 1983ի խմբագ-
 րականը՝ 15 Յունիսին (Asi nació..., էջ 4): Սակայն, Շարժումի Ա. տարուան Գ.
 թիւը - ուրկէ կը սկսի Վիեննայի Միւլթարեաններու հաւաքածոն - լոյս տեսած
 է 3 Յունիսին, ինչ որ յետադարձ հաշուարկով կու տայ 19 Յունիս 1937 թուա-
 կանը:
- ¹⁷⁵ Պետրոսեան, էջ 519:
- ¹⁷⁶ Գասապեան, էջ 314, 325. հմտ.՝ Սեֆերեան, էջ 163:

- ¹⁷⁷ Կիրակոսեան, 413:
- ¹⁷⁸ Նոյն, 152-153:
- ¹⁷⁹ Փանգրունի, Յանուս..., էջ 127, 189:
- ¹⁸⁰ Հմմտ.՝ Փանգրունի, Ս. Դ. Հնդ. Կուսակցութեան..., էջ 397:
- ¹⁸¹ Բարբոյեան, էջ 210. Հմմտ.՝ Տէր Խաչատուրեան, էջ 33, որ չի լիչեր Շարժումի ղաղրեցումը, որովհետեւ դէպքը զուգադիպած է իր հատորի սպագրութեան (1992):
- ¹⁸² Asi nació..., էջ 4. Սեֆերեան (էջ 163) լիչած է Վերահամ Խօյնիկեան եւ Ամահունի որպէս խմբագիրներ, բայց Վնմահունի հայացումն է «Խօյնիկի» Փանգրունի (Յանուս..., էջ 127) միայն կը լիչէ Ե. Կարմրակը իբրեւ խմբագիր:
- ¹⁸³ Բարբոյեան, էջ 210. Գ. Տէր Մկրտիչեան լիչատակուած է լոկ որպէս աշխատակից ալ աղբիւրի կողմէ (Asi nació..., էջ 4):
- ¹⁸⁴ Binayan, էջ 103:
- ¹⁸⁵ Hassassian, "Panorama...", էջ 107:
- ¹⁸⁶ Binayan Carmona, էջ 274:
- ¹⁸⁷ Սան Փաւլոյն գալով, վեց ամիս վարած է խմբագրութիւնը (Կիտուր, էջ 243):
- ¹⁸⁸ Կիտուր, էջ 246. Ճէրէճեանը կը լիչէ իբրեւ խմբագիր 1963ին, Ջէյթունցեանէն ետք: Ասիկա մօտաւորապէս ճիշդ է, քանի որ 1962ին հրատարակուած է խմբագրութենէ՝ հրեք տարուան պաշտօնավարութենէ ետք («Շնորհակալիք-Հրածնչտ», Մուրհանդակ, 16 Յունիս 1962, էջ 2): Իր խմբագրութեան տեւողութիւնը նշուած է իբրեւ վեց տարի («Նոր Հաճըն...», էջ 197), ինչ որ ենթադրել կու տայ մեզի, թէ երկրորդ անգամ խմբագիր եղած է աւելի ուշ:
- ¹⁸⁹ Բանաստոր հաղորդում (1985), առանց ճշդելու տարիները:
- ¹⁹⁰ Բանաստոր հաղորդում (Ապրիլ 1999):
- ¹⁹¹ Hassassian, "Panorama...", էջ 107 (Հմմտ.՝ Binayan Carmona, էջ 274): Ալ աղբիւրներ չեն լիչեր էքշեանը (Հմմտ.՝ Asi nació..., էջ 9, ուր գործակիցներու երկար ցանկ մը տրուած է, եւ չի):
- ¹⁹² Կիրակոսեան (էջ 413) կը լիչէ Մերոպ Տատուրեանը, լղուելով Գասապեանին, սակայն վերջինս կը նշէ Տատուրեանը որպէս հասցեստէր, ոչ թէ խմբագիր (էջ 325):
- ¹⁹³ Արծրունի, («Երկու Խօսք», անթուակիր էջեր):
- ¹⁹⁴ Ամբողջական անդրադարձը տես Մատթէոսեան, «Պուենտս Ալրեսի...», էջ 188-192:
- ¹⁹⁵ Սկզբնապէս, Հասասեան 1943-45 թուադրած է թերթին հրատարակութիւնը, թէեւ լիչատակած է աւելի ուշ լոյս տեսած նիւթեր (Binayan, էջ 104). խտագային, ճշգրիտ թուադրումը տուած է (Hassassian, "Panorama...", էջ 107. Հմմտ.՝ Binayan Carmona, էջ 256):
- ¹⁹⁶ Վաղ, Արարատ, Յունիս-Յուլիս 1947, Գ. կողք: Կերեւի թէ այս մեկնակէտով, Բարբոյեան (էջ 234) թերթը թուադրած է «1943-47...»:
- ¹⁹⁷ Գասապեան (էջ 327) սպաներէն յաւելուածը կը լիչէ որպէս առանձին թերթ, «1944-46...?» թուադրումով: Այլուր, ճիշդ տուած է 1943-47 թուադրումը հայերէն թերթին համար (նոյն տեղը, էջ 320), թէեւ Կիրակոսեան չէ անդրադարձած ու անտեսած է Արարատի գոյութիւնը:

- ¹⁹⁸ Արարատի վերահրատարակութեան առիթով, Արարատ, Յուլիս-Օգոստոս 1946, էջ 3:
- ¹⁹⁹ Ժամանակակից վկայութիւն մը կ'ըսէ, թէ 1955ին Յարութիւն վրդ. Մուշեան շարք տարիներէ ի վեր, կը վարէ անխոնջ խմբագրութիւնը Մասիա ամսաթերթին» («Մ՛վ է Յարութիւն...», էջ 6):
- ²⁰⁰ Պետրոսեան, էջ 550:
- ²⁰¹ Կիրակոսեան, էջ 385:
- ²⁰² Բարբոյեան, էջ 240. Կիրակոսեան չի լիչեր 1956ի հաւաքածոյի գոյութիւնը այդ գրադարաններուն մէջ:
- ²⁰³ Binayan, էջ 107:
- ²⁰⁴ Hassassian, "Panorama...", էջ 108 (հմտ.՝ Binayan Carmona, էջ 276; Toufeksian-Boulgourdjian, էջ 154, որ չի լիչեր բուն աղբիւրը):
- ²⁰⁵ «Ի՞նչ ընդ մանկուտը», Մասիա, Յունուար-Փետրուար 1953, էջ 1:
- ²⁰⁶ Վարդանեան, էջ 472-473:
- ²⁰⁷ Binayan, էջ 108; Binayan Carmona, էջ 279:
- ²⁰⁸ Կիրակոսեան, էջ 450: Ամսաթիւին ճշդումը կը պարտինք Գէորգ Տէր-Վարդանեանին:
- ²⁰⁹ Խառատեան, Միւլթարեան եւ այլք, էջ 459. Փորթուկալերէն անուանումին (Sociedade Cultural "Uniao Armenia de S. Paulo") հայերէն ճշգրիտ թարգմանութիւնն է:
- ²¹⁰ Պետրոսեան, էջ 553:
- ²¹¹ Կիրակոսեան, էջ 116:
- ²¹² Բարբոյեան, էջ 240:
- ²¹³ Binayan, էջ 102:
- ²¹⁴ Hassassian, "Panorama...", էջ 108 (հմտ.՝ Binayan Carmona, էջ 275; Boulgourdjian-Toufeksian, էջ 153, որ չի լիչատակեր բուն աղբիւրը):
- ²¹⁵ Հմտ. Մ. Գասպարեան, Սփիւռքահայ գաղթօջայիներն այսօր, Երևան, 1962, էջ 50:
- ²¹⁶ Պետրոսեան, էջ 553:
- ²¹⁷ Գասպարեան, էջ 50:
- ²¹⁸ Տես Սան Փաւլոյի Ararat ամսաթերթի Հոկտեմբեր 1946ի թիւը (Վարդանեան, էջ 532):
- ²¹⁹ Գասպարեան, էջ 50, 53. Կիրակոսեան (էջ 116) եւ Բարբոյեան (էջ 240) միայն կէսնճեանը կը ճանչնան որպէս խմբագիր:
- ²²⁰ Հասասեան սպաներէն բաժնի խմբագիր համարած է Պերճ Աճեմեանը (Binayan, էջ 102), ինչ որ սխալ է (տես Հայ Մամուլ, 8 Սեպտեմբեր 1945):
- ²²¹ Բարբոյեան, էջ 240 (հմտ.՝ Պետրոսեան, էջ 553): Հասասեանի սկզբնական նշումը, թէ Հայ Մամուլը երկօրեայ (trisemanario) էր (Binayan, էջ 102), իստոյ ճշդումն է որպէս եռօրեայ (Hassassian, "Panorama...", էջ 108): Սակայն, Թապազեան (էջ 164) Հասասեանի առաջին հաղորդումը հասկցած է իբրև շաբաթը անգամ մը լոյս տեսնող:

- ²²² Դ. Շահաբան, *Նխիթեր հայ պարբերական մամուլի պատմության համար», Պատմա-բանասիրական Հանդես*, No 3, 1964, էջ 161. *Կիրակոսյան*, էջ 355:
- ²²³ Binayan, էջ 105:
- ²²⁴ Hassassian, "Panorama...", էջ 111 (Հմմտ.՝ Binayan Carmona, էջ 276):
- ²²⁵ *Idem*:
- ²²⁶ Binayan, էջ 102, լատի գրություն է որպես երգի (Hassassian, "Panorama...", էջ 108):
- ²²⁷ Հմմտ. Hassassian, "Panorama...", էջ 112:
- ²²⁸ Binayan Carmona, էջ 278:
- ²²⁹ Daniel Karamanoukian, "Apuntes para una reconstrucción histórica de la conmemoración del 24 de Abril en Uruguay", *Hay Endanik*, Abril de 1999, էջ 42:
- ²³⁰ *Տանիէլ Գարամանուկեան, անձնական իմաստ, 16 Յունիս 1999:*
- ²³¹ Վարդանեան, էջ 531-533:
- ²³² Գասապեան, էջ 327. Բաբլոյան, էջ 464:
- ²³³ Jacob Bazarian, *Mito e realidade sobre a União Soviética*, São Paulo, 1973, էջ 154, որ կը լինէ թէ խմբագիր եղած է 1946-49ին:
- ²³⁴ Նոյն տեղը, էջ 537-538: Գանգրունի (Թանուկ..., էջ 189) Հ. Կ. Գալսէրեանը իբրև խմբագիր կու տայ, ինչ որ ճիշդ չէ:
- ²³⁵ Կիտուր, էջ 236:
- ²³⁶ Սեֆերեան, էջ 167. Կիրակոսյան, էջ 341. Խառատեան, Մխիթարեան եւ այլք, էջ 459. Գանգրունի, Թանուկ..., էջ 189 (էջ 127ին հիմնադրութիւնը կը ղնէ 1946ին, էջ 189ին՝ 1947ին) Տէր Խաչատուրեան, Ս. Դ. Հնչակեան..., էջ 40: 1949-1950 թուականը (Binayan Carmona, էջ 279), որ սխալ է:
- ²³⁷ Վարդանեան, էջ 540-542:
- ²³⁸ Binayan Carmona, էջ 279:
- ²³⁹ Կիրակոսյան, էջ 308:
- ²⁴⁰ Գասապեան, էջ 322:
- ²⁴¹ Բաբլոյան, էջ 250:
- ²⁴² Տէր Խաչատուրեան, էջ 56: Առանձին համբի մը հրատարակութիւնը, որպէս սպաներէն թերթ, նոր շրջանով՝ 1960ին (նոյն տեղը, էջ 76), ճիշդ չէ:
- ²⁴³ Hassassian, "Panorama...", էջ 108: Binayan Carmona, էջ 274. Պուլղուրճեան (Boulgourdjian-Toufeksian, էջ 153) կու տայ 1949-1958 եւ 1968-69, բայց այս երկրորդ շրջանը գոյութիւն չունի:
- ²⁴⁴ "Unión Juventud Armenia", *Armenia*, 23 de septiembre de 1967, էջ 1:
- ²⁴⁵ Hassassian, "Panorama...", էջ 108:
- ²⁴⁶ Binayan, էջ 106:
- ²⁴⁷ Պետրոսեան, էջ 548:
- ²⁴⁸ Hassassian, "Panorama...", էջ 109:
- ²⁴⁹ Պետրոսեան, էջ 548:
- ²⁵⁰ Բաբլոյան, էջ 464:
- ²⁵¹ Binayan, էջ 106:
- ²⁵² Hassassian, "Panorama...", էջ 109 (Հմմտ.՝ Binayan Carmona, էջ 275):

²⁵³ Binayan, էջ 106; Hassassian, "Panorama...", էջ 109.

²⁵⁴ Binayan, էջ 105; Hassassian, "Panorama...", էջ 109 (ՀՀԸՄ: Binayan Carmona, էջ 275).

THE ARMENIAN PRESS OF SOUTH AMERICA
(FROM THE BEGINNINGS TO 1950)
(summary)

VARTAN MATIOSSIAN

The study of the Armenian press of South America has largely been neglected by specialists writing in the Armenian language. The four specialized catalogues published in Armenia during the Soviet period (Garegin Levonian, 1934; Hovhannes Petrosian, 1954-57; Amalya Kirakosian, 1970, and Manvel Babloyan, 1986), as well as a score of partial listings and articles published elsewhere, contain some valuable information, but no study specifically dealing with the subject has been so far undertaken in the Armenian language.

The situation is better in Spanish, thanks to the efforts of a researcher, Carlos (Garabed) Hassassian, to whom readers are indebted for two essays of bibliography and brief analysis, in 1974 and 1989, as well as for some short articles. Unfortunately, his pioneering work has gone unnoticed to the specialists, due mainly to the language barrier.

This study makes a description of the South American Armenian-language press during the first half of the 20th century, given the fact that this period has been essential for the birth and growth of its main representatives. The author has listed all the periodicals founded until 1950 and has depicted all those that continued after that date or continue to this day. This study is not aimed at an analysis of contents, for some of the periodicals were not accessible to the author, and others have been only partially read. This bibliographical research can offer a tool to conduct such an analysis. No claim of completeness or accuracy is made by the author, due to the above mentioned problems, as well as due to the lack of good collections, the ephemeral nature of some periodicals, the scarcity of auxiliary data, etc. For this reason, says the author, sometimes the presentation is not complete. He has tried to make a critical survey of the information contained in all the primary and secondary sources available, to get the maximum level of accuracy for the time being.

During the 1915-1950 period, 36 periodicals were launched in the three main South American Armenian communities: 27 in Argentina, 5 in Brazil, and 4 in Uruguay. Three of them, all in Argentina, continue being published to-date.